Զ· ՏԱՐԻ 1519 ԹՒԻ ՀԱՅՈՑ 4381 ԱՐԱՋ 19 — ՀԻՆԳՇԱԲԹԻ 26 ՅՈՒՆՈՒԱՐ 1889 (Ն. Տ.) 7 ՓԵՏՐՈՒԱՐ 1889 — 6 ՁԵՄԱԶԻՒ, ԱԽԸՐ 1306

20 ՓԱՐԱ

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՑԷ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Գալատիա, Նորատունկեան-խան

درعليه‌ده غلطه‌ده نورادونكيان خاننده آره‌وك
غزته‌سى اداره‌سنه

Direction du journal AREVELK
Noradounghian Han, Galata
CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ
ՕՐԱԳԻՐ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

20 ՓԱՐԱ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ· Պոլսոյ համար Տարեկան գահեկան արժէք	160
» » Վեցամեայ »	80
» » Եռամեայ »	40
Գաւառաց » Տարեկան »	200
» » Վեցամեայ »	100
Օտար երկիրներէ տարեկան ֆրանք	56
» » վեցամեայ »	28

Դուրս զրկուած լրագրաց ճամբու ծախքը Տնօրէնութեան վրայ է
խմբագրութեան զրկուած նամակ կամ գրութիւն ետ բարձր։

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

Կ· ՊՈԼԻՍ, 26 ՅՈՒՆՈՒԱՐ, 1889

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

ԸՆՏՐԱԿԱՆ ԴՐՈՒԹԵԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿ

Երեսփոխանաց Ժողովը չմերժեց գաւառակային ընտրական դրութեան վերահաստատման նախարարական առաջարկն, ինչպէս անցեալ օր կարծել տուած էր Հավասի թերի հեռագիրը մը։ Միապետականք ինդրած էին ստիպողութիւն տալ նախարարական առաջարկին, սա՛ տեսութեամբ թէ Երեսփ· Ժողովը, դատապարտելով գաւառային ընտրական դրութիւնն, որով կազմուած է, դատապարտած պիտի լինի ազգիւրն ուստից բխած է, և հետեւապէս իւր օրինական պայմանաժամն յառաջ պիտի լուծուի։ Պ· Ֆլոքէ մերժեց այս կարծիք, յիշեցնելով թէ 1885ին ևս նոստյրջանի նոյն պահանն ներկայացուած էր գաւառային ընտրական դրութեան առաջարկն, և սակայն Երեսփ· Ժողովն ինքզինք լուծեալ չհռչակեց։ Թէեւ Միապետականք կը գանդատէին թէ կառավարութիւնն ըստ կամն ընտրական դրութիւն կը փոխէ, իւր շահերուն յարմար երեւցած դրութիւնն ընտրելով, Պ· Ֆլոքէ պատասխանեց թէ գաւառակային միանուն քուէարկութիւնը վերահաստատելու որոշումը տուած է հանրային կարծիքը չօշափելէ յետոյ։ Ո՛չ միայն գաւառային պաշտօնէից այլ և հանրապետական մամլոյն կարծիքը քննելով, կառավարութիւնը վերահասու եղած է թէ հանրային կարծիքն ստուար մեծամասնութեամբ կը պահանջէ միանուն ընտրական դրութեան վերահաստատումը։ Կառավարութիւնը չպիտի լուծէ Երեսփ· Ժողովը՝ միանուն դրութեան քուէարկութիւնն պէտ Պուլանժէի դէմ մաքառելու համար, կառավարութիւնը չպիտի կատարէ Պուլանժէի պահանջումն, որ արդի Երեսփոխանութիւնը դատապարտեալ հռչակելով, օր առաջ անոր լուծումը կը պահանջէ։ Եթէ երբեք կառավարութիւնը մտադրէ ընդհանուր ընտրութիւնները փութացնել, Երեսփ· Ժողովոյ կամքը չառած բան չպիտի ընէ։ Պ· Ֆլոքէ ի վերջոյ հարցուց թէ իւր առաջարկն ստիպողութիւն տալ խնդրող ընդդիմիններուն նպատակն ո՞րն է· պարզապէս առաջարկն քուէարկութիւնը դիւրացնե՞լ, թէ ոչ՝ ստիպողութեան քուէարկումն համարել ուզում մը թէ Երեսփ· Ժողովն ինքզինք լուծեալ կը հռչակէ։

Պ· Բազօ, իւրմնոյն միապետական ընդդիմադրաց, պատասխանեց թէ առաջարկին քուէարկումն արդի Երեսփոխանութեան կտակը պիտի լինի։

Նախագահ նախարարապետ Պ· Ռուվիէ պատասխանեց թէ Պ· Բազոյէ կախում չունի քուէի մը նշանակութիւնը փոխել։ Ինք (Պ· Ռուվիէ) Ժողովի եկած էր՝ ստիպողութիւն քուէարկելու նպատակաւ, որովհետեւ գաւառային բազմանուն քուէին տեղ գաւառակային միանուն քուէն վերահաստատելու կուսակից է։ Բայց ինք ո՛չ նուազ կը պնդէ թէ արդի Երեսփոխանութիւնը պէտք է շարունակէ իւր պաշտօն ցաւարտ իւր քառամեայ պայմանաժամուն (մինչեւ աշուն)։ Պէտք է սակայն երկդիմի որոշումէ մը զգուշանալ, և հարկէ որ Հանրապետականք միահամուռ կա՛մ քուէարկին ստիպողութիւնն և կամ մերժեն։ Արդ, ո՛չ մէկ Հանրապետական գաւառակային միանուն քուէի դրութեան դէմ կարծիք յայտնել կը խորհի։

Պ· Ռուվիէի խօսքն ընդմիջեց արմատական Պ· Հանրի Մառէ, ծանուցանելով թէ ինք համոզուած չէ ընտրական դրութիւնը փոխելու հարկաւորութեան։

Ուրիշ մը, Պ· Ժորժ Ռոշ, դիտել տուաւ թէ Պ· Ռուվիէ, միանուն քուէի դրութեան վերահաստատման նպաստելով, օր առաջ իշխանութեան անցնիլ կը յուսայ։

Ան որ Պ· Ռուվիէ իրաւամբ պատասխանեց թէ Պ· Ռոշ չատ խեղճ գաղափար ունի իւր հանրապետական պաշտօնակցայ վրայ, եթէ կը կարծէ թէ անոնք՝ գործոց արդի վիճակին մէջ՝ իշխանութեան անցնելու ո՛ և է փափաք ունենան։ (Ծափահարութիւն։)

Պ· Ռուվիէ եզրակացուց թէ հանրապետական մեծամասնութիւնն, երկդիմի որոշումը չտալու համար, պէտք է նախ մերժէ ստիպողութիւնն, որով մերժած պիտի լինի Միապետականաց այս ընտրական փոփոխման տուած նշանակութիւնն, և յետոյ, երկրորդ քուէարկութեամբ մը, պէտք է հրամայէ անմիջական անուանումն նախաքննիչ յանձնաժողովոյ, առ որ պիտի յղուի նախարարութեան բերած առաջարկն։ Առաջարկեց նաեւ որ երեքշաբթի կազմուի յանձնաժողովը։

Պ· Ֆլոքէ յայտարարեց թէ կառավարութիւնը կ'ընդունի Պ· Ռուվիէի առաջարկն։

Այս պայմանաց մէջ ահա Ժողովն 174ի դէմ 359 քուէով մերժելով ստիպողութիւնն, և յետոյ, 33ի դէմ 471 քուէով որոշելով այս երեքշաբթի կազմել նախաքննիչ յանձնաժողովն, ընտրական փոփոխման ո՛չ թէ հակառակ այլ նպաստաւոր քուէ մը տուաւ իւր անցեալ շաբաթ աւուր նստին մէջ։

Երեսփ· Ժողովոյ սոյն նստին մէջ արտայայտեալ տրամադրութիւններէն և հանրապետական մամլոյն լեզուէն կ'երեւի թէ միանուն քուէ դրութիւնը պիտի վերահաստատի։

Բայց թէ այս վերահաստատումէն Հանրապետութիւնը պիտի օգտի՞, կամ թէ Պուլանժէ ինքզինք շատ մը տեղերէ միանդամայն Երեսփոխան ընտրել տալու դիւրութենէն պիտի զրկուի՞,—այս ալ ուրիշ խնդիր մ'է։

Շատեր, նոյն իսկ հանրապետական կուսակցութեան մէջ, սա փիլիսոփայական կարծիքը կ'արտայայտեն թէ քանի որ ֆրանսացի Ժողովրդեան մէջ պուլանժէական հոսանք մը կայ, քանի որ հանրապետական դրութիւն, ինչ որ ալ ընէ, չի զօրեր ժողովրդական կամաց ազատ արտայայտութիւնն ազդելել, ո՛ և է միջոց չի կրնար խափանել Պուլանժէի վերջնական յաղթանակն, եթէ միտքերը նոր լոյս մը չընան, և եթէ արդի հոսանքը չկան։

ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ

ՌՈՒՏՈԼՖ ԻՇԽԱՆԻ

ՀԵՏԱՔՐՔՐԱՇԱՐԺ ՊԱՐԱԳԱՑՆԵՐ

Թագաւորն Վիեննայի թղթակիցն, որ շատ համակիր է աւստրիական կառավարութեան և հանգուցեալ Իշխանին, հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կուտայ ան պարագայից վրայ յորս, յետ երկար վրանմանց, որոշուած է վերջապէս ճշմարտութիւնն հռչակել Դահաժառանգին մասուն կերպին վրայ։

Թղթակիցը կ'ըսէ փետր· 1 թուակիր հեռագրովը։

«Պաշտօնական նոր ծանօթութիւնը, թէ Ռուտոլֆ Իշխան ըէվոլվերով ինքզինք սպաննած է, կը հաստատէ եղելութեան այն պատմութիւնն որ առջի օրէն լսուած էր։

«Ծանծաղամիտ պաշտօնեայք ոմանք ուզեցին հաւատացնել Ժողովրդին թէ Դահաժառանգը կաթուածահար եղած էր, և եղելութիւնն ուրիշ կերպ պատմող հեռագրերն արգիլեցին և լրագրերը գրաւեցին։ Այս մարդիկ մոռցան թէ Վիեննայի պատուաւոր բժիշկ ոմանք պարտէին վկայութիւն տալ, և թէ Պ· Թիսա, իբրեւ նախարարապետ Հունգարիոյ, իւր ստորագրութիւնը պէտք էր դնէր պետական տումարաց մէջ արձանագրելի պաշտօնական յայտարարութեան մը։

«Դահաժառանգին մարմինը քննող բժիշկներն էին Փրոֆէսորք Վիտէրհոֆէր, Աուխենթալը և Բունտարթ, և մեծ պատիւ է այս գիտնականաց որ սուտ տեղեկագիր մը ստորագրել մերժեցին։ Ֆրեսերիկ Կայսեր հիւանդութեան առթիւ բժշկաց մէջ տիրած ողբալի վէճը դէթ սա բարի արդիւնքն ունեցաւ որ բժշկային դասուն մէջ կանոն հաստատեցաւ ո՛ և է քաղաքական պատճառաւ ճշմարտութենէն չշեղել։

«Այս բժիշկներուն ըսուեցաւ թէ ապաքէն ամեն մահ յառաջ կուգայ սրտի կաթուածէ (Herzschlag), այսինքն սրտին մէջ արեան դադարումէն, և հետեւապէս սուտ խօսած չեն լինիր եթէ ստորագրեն անորոշ տեղեկագիր մը, յայտարարող թէ Իշխանը կաթուածէ մեռաւ։ Բժիշկներն յայտարարեցին սակայն թէ կա՛մ բնաւ տեղեկագիր պէտք չէ ստորագրեն և կա՛մ ճշմարտութիւնը պէտք է յայտնեն։

«Ասոր վրայ, Պ· Թիսա յայտարարեց թէ ինք պարտաւոր է ճշմարտութիւնը խօսելու մաճառ Խորհրդարանին և մաճառ ազգին, և պնդեց որպէս զի ճշմարտութիւնն ամենայն հրատարակուի։ Բարոնքի Կոմս այժ տուաւ առ Պ· Թիսա։ Կ'երեւի թէ ասոր վրայ մեծ վայնասուն մը բրթաւ այն պաշտօնէից մէջ որք յարեալ կը մնային աւստրիական հին դաղափարին թէ կառավարութիւնն ի ծածուկ ամէն պէտք է գործէ։ Բայց միջոցէն յետոյ ժամ 1ին Կայսրն ևս հրամայեց որ բժշկայ ճշմարիտ տեղեկագիրն հրատարակուի, որ անմիջապէս տարուեցաւ պաշտօնական Վիէնէր Զայտունգի տպարանը։ Միանգամայն արտաքին գործոց նախարարութենէն հեռագրեր ղրկուեցան՝ օտար Իշխանաց Վիեննան գալուն առաջքն առնելու համար, քանի որում Կայսրը բնականապէս կը փափաքէր որ իւր որդւոյն թաղումն որչափ կարելի է պարզ կատարի այս պայմանաց մէջ։

«Հիմակ որ կը խոստովանուի թէ Դահաժառանգն ինքնասպան եղած է, ամեն օր մէկ մէկ պատմութիւն կ'ընէ վերջին ամսոյ մէջ Իշխանին վրայ եղեւացած փոփոխութեանց նկատմամբ։ Իւր բարեկամք կ'ըսեն թէ անցեալ տարի ձիէն դլխուն վրայ իյնալէն ի վեր Իշխանն առաջուան երիտասարդը չէր այլեւս։ Անցեալ շաբաթուն օր մը թատրոնը կը դանուէր Կայսեր հետ, և խօսեցաւ ու խնդաց մինչեւ որ Ն· Վեհափառութիւն եկաւ դնաց։ Յետոյ իւր դլխոյը ձեռքերուն մէջ առած, խորին մտատանջութեան մէջ թաղուեցաւ, և այնչափ ապուշ դէմք մը առաւ որ շատեր իրարու կը հարցուցանէին թէ Իշխանն ինչ ունի։ Մտային խանգարման ուրիշ նշաններ ալ պակաս չէին։ Իշխանին կենաց վերջին դիշերուան դէպքերն ևս իւր մտայ շփոթութիւնը կը ցուցնին բաւական։ Մինչեւ կէս դիշերին եղաքը ժամ 3 նստած էր Հայոս Կոմսին և Պրաֆֆիշլանուն կառապանի մը հետ, որ զաւեշտական եղանակներ կ'երգէ։ Հասարակութիւնը լաւ չի խօսիր Հայոս Կոմսին վրայ, որ շատ անխելք վարուած է՝ անցեալ երեքշաբթի չդիտելով թէ Դահաժառանգն ամբոխի վիճակի մէջ կը դտնուէր որ ամենայն ուշադրութեամբ իւր վրայ հսկել պէտք էր։ Քանի որ Իշխանն անընդհատ կը խօսէր իւր մտատրաւ վախճանին վերայ, և բէվոլվէր մը ցոյց կուտար, խելացի մարդ մը պէտք էր խմնար թէ Իշխանը դէշ վիճակի մէջ էր։

«Ճշմարտութիւնն ամբողջ օր մը դաղտնի պահուեցաւ նոյն իսկ Կայսրէն, որ մինչեւ չորեքշաբթի երեկոյեան ժամ 6 կը կարծէր թէ իւր որդին բնական մահուամբ մեռած էր։ Կարելի է ներել անոնց որք ահաւելի ճշմարտութիւնը Կայսրէն ծածկել կ'ուզէին, նորա հայրական զգացմանց խրնայելով։ բայց ներելի չէ այն ասարիացի պաշտօնէից ընթացքն որք, ճշմարտութեան վերահասու լինելով և գիտնալով թէ Կայսրն ևս տեղեակ է, հրահանգ կուտային մաճառ Խորհրդարանի Նախագահին՝ իւր անձնական պատասխանատուութեան ներքև՝ հանդիսապէս յայտարարել երեկի նստին մէջ թէ Իշխանը կաթուածահար մեռած է։ Ճշմարտութեան և պատուաւոր մարդկան հետ այսպէս խաղալու սովոր էին միայն Մէթէրնիխի դէպքոյն աշակերտած սատանոս դիւանագէտները։»

* * *

Ռուդոլֆոս Թագաժառանգ արքիդուքսն ծնած է Լաքենպուրկ դղեակն 1858, Օգոստոս 21ին։ Ի մանկութենէ կը նշմարուէին վրան չքնաղ ձիրքեր, որոնք յԵՌԹՅՈՒ ստրեաց անուանի ուսուցչաց հրահանգներուն կատարելագործուեցան։ Թագաժառանգին դաստիարակութեան ընդհանուր վարչութիւնն յանձնուած էր Լաղուբ Փոն Թուրմպուրկ անուանի զօրավարին Ռեսման ընթացքն ուսարտէին և ամեն ճիւղի մէջ քննուելով քաջ հանդիսանալէն ետքը 1877 Յունիս 21ին չորեսուն հրատարակուեցաւ։ Տարի մ'ետքը զինուորական ծառայութեան մէջ մտաւ, և այս ճիւղին մէջն ալ իւր յաջողակութիւնն երեւան գալով 1883ին Սպարապետի և Ծովապետի տեղակալ անուանեցաւ։ Այս պաշտօնեա զանազան դեղերու զօրավարութիւնն ալ և այլ քաղաքաց մէջ կատարելով զօրաց մէջ այնպիսի համակրութիւն ստացաւ, մինչեւ իւր կայսերական հայրն զինք 1888 Մարտ 18ին բոլոր ոստանաւոր զօրաց վերին խնամակալ անուանեց։

Ռուդոլֆոս Թագաժառանգին ձիրքերն ու յաջողակութիւնները միայն զինուորական ճիւղին մէջ չէին, այլ ամեն գիտութեանց մեծ սէր ու հմտութիւն ունէր, բայց ի մասնաւորի բնագիտութեան։ Ուսումնական նպատակաւ զանազան ճանապարհորդութիւններ ըրած է եւ ասոնց ստորագրութիւնները գեղեցիկ և հիմանալի ոճով գրած ի լոյս ընծայած է· որպիսի են «Հնգեռասան աւուրք ի Դանուբ», «Ճանապարհորդութիւն յԱրեւելս», և ն։ Բայց իւր ամենանշանաւոր ու անուանի գործն է «Աւստրիական - հունգարական պետութիւնն ի բան և ի պատկեր» անուամբ ընդարձակ հատորաւոր երկասիրութիւնն։ Այս ամենայն առիթ տուած է Վիեննայի և Բրաքաբի համալսարանաց գիտնական իշխանին Փիլիսոփայութեան վարդապետի պատուոյ տիտղոսը տալու։

Ռուդոլֆոս 1881ին Մայիսի 10ին Բեղգիայի Թագաւորին Սանֆանի աղջկան հետ ամուսնացաւ, որմէ ունեցաւ 1883ին Սեպտ· 2ին, մի միակ դուստր, Եղիսաբեթ Արքայադուստրն։

Մեր այս տխուր բօթն կը վերջացնենք վերոյիշեալ «Wiener Zeitung»ի հետ թէ՝ «Պահէ Աստուած, պաշտպանէ Աստուած, օրհնէ Աստուած Վեհափառ Կայսրն և իւր Կայսերական տունն, և ամենուս պարգեւէ այժ և զօրութիւն այսպիսի մեծ դժբախտութիւն մ'արութեամբ տանելու։»

(Հանդէս ամսօրեայ·)

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վիլհելմ Կայսեր հրամանաւ, Պաթեմպերկեան Ալեքսանդր Իշխան, իւր ինդրանօք, արձակեցաւ բրուսիական բանակին մէջ ունեցած պաշտօնէն, ուր երրորդ կարգի զօրավար էր կայսերապահ զօրաց։ Գերմանական բանակին հետ Պուլկարիոյ նախորդ Իշխանին ամեն յարաբերութիւնք խզեցան։ Իշխանն ուսարեւմտեան բանակին մէջ պաշտօն ընդունել կը խորհի, իւր հանդուցեալ հօր պէս։

—Անդլիական բանակին սպարապետ Բէնտրիճի Դուքսը պիտի քննէ Ճիպրալթարի, Մալթայի և Կիպրոսի ամրութիւնները, պաշտպանութեան միջոցներն ապահովելու և բարւոքելու համար։ Յետոյ Եգիպտոս պիտի երթայ, և պիտի որոշէ թէ այժմ կարելի՞ է բոլոր անգլ· զօրքն հանել Եգիպտոսէ։

—Լեհ և ռուս կաթոլիկ եպիսկոպոսաց անուանման նկատմամբ ռուս կառավարութեան և Վատիկանի միջեւ բանակցութիւնք վերջնական արդիւնք մը տուին, կ'ըսէ Փեթերսպուրկէ առթիւ ուղղեալ հեռագիր մը։ Որոշուեցան այն եպիսկոպոսք որք պիտի անուանին Վատիկանի առաջիկայ եպիսկոպոսական ժողովոյն մէջ։ Գալով Վիլնայի արքեպիսկոպոսութեան, (Վիլնայի արքեպիսկոպոսն ի Սիպերիա աքսորեալ է,) գժտարութիւնը սա կերպիւ լուծուեցաւ։—Արքեպիսկոպոսին ներում պիտի շնորհուի կառավարութեան կողմէ, և նոր արքեպիսկոպոս մը պիտի անուանի, մինչ Լեհք կը պահանջէին որ աքսորեալ արքեպիսկոպոսն ետ կանչուի և վերահաստատի պաշտօնին մէջ։

—Ռուս թերթի մը կ'ըսէ· «Զօր· Պուլանժէ Ռուսիոյ բարեկամ է, և իւր ընտրութիւն պիտի խնդարհեցնէ Գերմանիոյ գոռոզութիւնն, և ազատ չունչ մը քաշել պիտի տայ Աւստրիոյ և Պալքանեան թերակղզոյ Սլաւներուն։

—Ռուս լրագրքը շատ կը ցաւին Ռուսոյի Իշխանին մահուան համար, որովհետեւ, կ'ըսեն, հարաւային եւ աւստրիական Սլաւք մեծ բարեկամ մը կորուսին, որ թերեւս օր մը պաշտպան ազգի մը Կայսր լիներ։

—Հեռագիրն արդէն ծանոյց Ֆրանսայի Երեսփ· Ժողովոյ յունուար 31ի ազգակից նստին արդիւնքն, յորում Պ· Ֆլոքէի դահլիճը վստահութեան քուէ ստացաւ մեծ դժուարութեամբ։ 236ի դէմ 289 քուէով արտայայտեցաւ վստահութիւնն, և Պուլանժէական մի մեծամասնութեան հետ քուէարկեց։ Փոքրամասնութիւնը կը բաղկանար 52 Հանրապետականներէ (Պ· ժիւլ Ֆէրրի և ուրիշ Զափաւորք,) 169 Միապետականներէ և 15 Պուլանժէականներէ։ Ձեղքը Ճնցին 2 Միապետականք, 21 Հանրապետականք, 6 Ընկերվարականք և 1 Պուլանժէական։ Մեծամասնութիւնն ամբողջովին Հանրապետականներէ բաղկացեալ էր։ Առաջին անգամն էր որ խումբ մը Հանրապետականներ արդի նախարարութեան դէմ քուէարկեցին· զի ցարդ, որչափ ևս համամիտ չլինէին արմատական քաղաքականութեան, չափաւոր հանրապետականք՝ ի սէր հանրապետական դատին՝ Պ· Ֆլոքէի նախարարութեան նպաստաւոր քուէ տուած էին, բան մը զոր Արմատականք չատ անգամ զլացած են չափաւոր հանրապետական նախարարութեանց։ Անցեալ ապրիլէն ի վեր որ իշխանութեան վրայ է արմատական նախարարութիւնը, վստահութիւն ղլացող փոքրամասնութիւնը Միապետականներէ աւելի կը բաղկանար, և վստահութիւն արտայայտուած էր հետզհետէ 379, 270 և 299 քուէներով։

—) 40 (—

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼԲԻ

ԺԻԼ ՎԷՌՆ

ՍԵՒ-ՀՆԴԿԱՍՏԱՆ

ԳԼՈՒԽ ԺԴ·

—o—

ԼՈՄՈՆՏԻ ԼԻՆՆ ԲԷՏՐԱՑՆԻ ԼԻՃԸ

Աւասիկ Մըրրիյ կղզին, իւր Էվենոքսի հին ամրոցով, ուր բնակեցաւ Ալպանիի ծերունի դքսուհին յետ մահու իր հօրն, ամուսնոյն, իր երկու որդւոց, որք Յակոբ Ա·ի հրամանաւ գլխատուեցան։ Աւասիկ Գլար կղզին, Գրօ կղզին, Դորը կղզին, ոմանք ժեռուտ, վայրի, առանց բուսաւորութեան, այլք ցոյց տալով իրենց կանաչ եւ բոլորակ մակերեւոյթը։ Աստ, կուեններ եւ ցարասիներ։ Անդ, դեղին եւ չորցած հաւամրգիներու դաշտեր։ Արդարեւ, հաւատալ չի դար թէ Օնդարիոյի հազար կղզիներն այսչափ դեղեցիկ տեսարաններու պէսպիսութիւն մը ընծայեն։

—Ի՞նչպէս կը կոչուի այս փոքր նաւահանգիստն, հարցուց Նէլ որ լճին արեւելեան կողմը դարձած էր։

—Պալմահա նաւահանգիստն է, որ Հայլէնտներու բերանը կը կազմէ, պատասխանեց Ճէյմս Սդար։ Հոն կ'սկսին մեր Սկովտիոյ բարձր դաւառները։ Սա տեսած աւերակներդ, Նէլ, կանանց հին վանքի մը աւերակներն են, եւ սա ցանուցիր դեղեղմանները կը պարունակեն զանազան անդամներ Մաք Կրիկորներու ընտանիքէն, որուն անունը տակաւին հռչակաւոր է բոլոր երկրին մէջ։

—Հռչակաւոր այն արեամբ զոր այդ ընտանիքը թափած եւ թափել տուած է, դիտեց Հարրի։

—Իրաւունք ունիս, պատասխանեց Ճէյմս Սդար, եւ պէտք է խոստովանիլ թէ ճակատամարտներու տուած հռչակը տակաւին ամէնէն մեծաբարբառն է։ Այդ ընթացքին մէջ···

—Եւ երգերով կը յաւերժանան, յարեց Ճէք Բիան։

Եւ, ի՞ հաստատութիւն իր խօսքին, քաջարի տղան հնչեցուց առաջինն տունն պատերազմական հնչուլոց երգի մը որ կը պատմէր Ալէքսանդր Մաք Կրիկորի չհաստակութիւններն ընդդէմ Հընֆրի Գոլքուհուրի։

Նէլ մտիկ կ'ընէր, բայց այս կռիւներու պատմութիւններէն տխուր տպաւորութիւն մը միայն կ'ստանար։ Ինչո՞ւ համար այդչափ ատեն թափել այդ դաշտերուն վրայ զորս մատաղատի աղջիկն անհուն կը գտնէր, հոն ուր ոչ մէկուն տեղ պիտի պակսէր։

Լճին ափունքն, որք երեք չորս հազար մղոն երկայնութիւն ունէին, Լիւսի փոքր նաւահանգստին մօտերը մլմեանց կը մօտենային։ Նէլ կրցաւ պահ մը դիտել վաղընջուց դղեկին հին աշտարակն։ Յետոյ, Սէնթէյզ հիւսիսային կողմն ուղղեց խելքը, եւ զբօսաշրջիկներուն աչքին երեւցաւ Պէն Լոմոնտը, որ իւր երեք հազար ոտք կը բարձրանայ լճին մակերեւոյթէն։

—Ինչ հիանալի լեռ, գոչեց Նէլ արդեօք իր կատարէն տեսարանն ո՛րչափ գեղեցիկ լինելու է։

—Այո, Նէլ, պատասխանեց Ճէյմս Սդար։ Տես այդ կատարն ի՛նչ վէսութեամբ կ'անջատի կաղնիներու, ցարասիներու, կուեններու պուրակներէն որք կը զարդարեն լերան ստորին դօտին։ Ադկից, մեր վաղեմի Կալեդոնիոյ երկու երրորդը կը տեսնուի։ Մաղ Կրիկոր հոս կը բնակէր սովորաբար, լճին արեւելեան մասին վրայ։ Ադկից ոչ հեռու, Յակոբեանց եւ Հանովրեանց կռիւներն յաճախ արեամբ ներկած են այս աղետաւոր կիրճերը։ Հոն, գեղեցիկ գիւղերները, կը բարձրանայ այն աղօտ լուսինը զոր հնաւուրց պատմութիւնք «Մաք Ֆէրլանի լապտերը» կը կոչեն։ Հոն, արձագանդները տակաւին կը կրկնեն Բոպ Բուսյի եւ Մաք Կրիկոր Գանպլի անունները։

Պէն Լոմոնտ, որ Կրամբեան լերանց չղթային վերջին կատարն է, իրօք արժանի է սկովտիացի մեծ վիպասանին հռչակուած լինելուն։ Ինչպէս դիտել տուաւ Ճէյմս Սդար, աւելի բարձր լեռներ կան, որոց կատարը ծածկուած է յաւերժական ձիւներով, սակայն աշխարհիս ոչ մէկ կողմն աւելի բանաստեղծական լեռ մը կայ։

—Եւ, յարեց, երբ կը խորհիմ թէ այս Պէն Լոմոնտն ամբողջովին կը վերաբերի Մոնդրոզի դքսին։ Ն· Վսեմութիւնը լեռ մը ունի, ինչպէս Լոնտոնի քաղքենի մը՝ ածու իր պարտիզին մէջ։

Այս միջոցին, Սէնթէյզ կը հասնէր Թարպէթ գիւղը. լճին հանդիպակաց ափունքին վրայ, ուր հանեց Ինվերէյրի գնացող ուղեւորները։ Այդ տեղէն, Պէն Լոմոնտ կ'երեւէր իր բովանդակ գեղեցկութեամբ։ Իր կողերն, որք հեղեղատներու ընթացքէն ճաթռտած էին, հալած արծաթի պէս կը ցոլացնէին։

Ցորչափ Սէնթէյզ կը քերէր լերան ստորոտն, երկիրն հետզհետէ ապալեր կը լինէր։ Հաղիւ, դէս ու դէն, կղզիացեալ լեռներ, ի մէջ այլոց մէկ քանի հատ այն ուռներէն, որոց ուղէշներով երբեմն կը կախէին ստորին վրձակի տէր մարդիկը։—կանեփը խնայելու համար, դիտել տուաւ Ճէյմս Սդար։

Լիճը սակայն երթալով կը նեղնար, դէպի հիւսիս երկարելով։ Կողմնակի լեռներն աւելի սեղմիւ կ'ընդդիմէին զայն։ Շոգենաւը քերեց տակաւին մէկ քանի կղզիներ և կղզեակներ, Ինվերուկլաս, Հու, ուր կ'երեւէին վիլատակներն ամրոցի մը որ Մաք Ֆէրլաններուն կը պատկանէր։ Վերջապէս, երկու ափունքը միացան, և Սէնթէյզ կանգ առաւ Ինվերսլէյտի նաւամատոյցը։

Հոն, մինչդեռ իրենց նախաճաշը կը պատրաստուէր, Նէլ և իր ընկերները զբօսնցին այցելելէ, նաւամատոյցին մօտ, հեղեղատ մը որ բաւական մեծ բարձրութենէ կը թափէր լճին մէջ։ Կարծես թէ հոն զլխեզուած էր այն իրը զարդ, ի հաճոյս զբօսաշրջիկներուն։ Երերուն կամուրջ մը ձգուած էր խռովայոյզ ջուրերուն վերեւ, հեղուկ փոշիի մը մէջտեղ։ Այդ տեղէն, նայուածքը կ'ընդդրկէր Լոմոնտի մէկ մեծ մասն, և Սէնթէյզ ա՛լ իրը կէս մը կ'երեւէր նորա մակերեւոյթին վրայ։

Նախաճաշն աւարտելէ յետոյ, կը մնար Բէդդրայնի լիճն երթալ։ Քանի մը կառքեր, Պրոմէլդանի ընտանեաց զինանշաններով,—այդ ընտանիքն որ երբեմն վայտրն և ջուրը կ'ապահովէր փախստական Բոպ Բուսյին,—ուղեւորներուն տրամադրութեան ներքև էին և իրենց կ'ընծայէին այն բոլոր հանգստաւէտութիւնն որ անգլիական կառքերուն յատուկ է։

Հարրի Նէլը բազմեցուց կառքին յառաջակողմն, օրուան նորածեւութեան համաձայն։ Իւր ընկերներն եւ ինք նորա մօտ նստան։ Կարմիր նշանագգեստով չքեղ կառավար մը ձախ ձեռքին մէջ առաւ իր չորս ձիերուն երասաններն, եւ կառքն սկսաւ հիլել լերան կողմն վեր, հեղեղատին ոլոր մոլոր ընթացքը քերելով։

Ուղին շատ առլեսի էր։ Ցորչափ կը բարձրանար, չրջակայ կատարներուն ձեւն ալ կը թուէր փոխուիլ։ Լճին հանդիպակաց եզերն բոլոր լեռնաշղթան եւ Արրոքուհարի կատարները վեհափառօրէն կը բարձրանային, տիրապետելով Ինվերքաբսի հովտին վրայ։ Զախակողմէն կ'երեւէր Պէն Լոմոնտը, ի հանդէս բերելով իր հարաւային կողին զարմալիքը։

Լոմոնտի լճին եւ Ֆէարայնի լճին միջեւ գտնուող երկիրը վայրի երեւոյթ մը ունէր։ Հովիտը կ'սկսէր անձուկ կիրճերով որք Ապերֆոյլի գաւառին կը յանգէին։ Այս անունը ցաւագին կերպով նորատի աղջկան յիշեցուց այն արհաւրալի անդունդներն, որոց խորն անցած էր իր մանկութիւնը։ Ուստի Ճէյմս Սդար փութաց զնա զուարճացնել իր պատմութիւններով։

Մնաց որ, երկիրն յարմար էր այս բանին։ Արդի լճակին եզերքին վրայ է որ տեղի ունեցած են Բոպ Բուսյի կենաց գլխաւոր դէպքերը։ Հոն կը կանգնէին կրաքարային ժանտատեսիլ ժայռեր, գայլասպիներով խառն, զորս ժամանակն և մթնոլորտը շաղոսիի պէս կարծրացուցած էին։ Որվերու նմանող ողորմելի խրճիթներ կ'երեւէին կիսափուլ գոմերու մէջտեղ։ Կարելի չէր ըսել թէ մարդկային էակները՞ բնակեալ էին թէ վայրի գազաններ։ Քանի մը տղեկներ, որոց մազերն արդէն գունատած էին կլիմային խստութենէն, զարմացկոտ մեծ աչուքներով կը դիտէին կառքերուն անցնիլը։

—Այս երկիրը մասնաւորապէս կարելի է Բոպ Բուսյի երկիրն անուանել։ Հոս է որ Նիքոլ Եարվի պատուական գիւղապետն, արժանի զաւակ իր սարկաւագ հօրը, բռնուեցաւ Էվենոքսի կոմսին զինուորներէն Ճիշդ այս տեղն է որ կախուած մնաց իր անդրավարտիքին յետոյքէն, որ բարերարդաբար սկովտիական լաւ կտաւէ մը չինուած էր, եւ ոչ թէ Ֆրանսայի այն բարակ կտաւներէն։

(Շարունակ.)

—Պիզմարք Իշխանի վրայ անգլիական Քոռնէգորէրէ Ռէյէ՝ հանդիսին մէջ ծանուցեալ յօդուածն հրատարակող իրազէկ դրիչը սա հետաքրքրաշարժ դիտողութիւնը կ'ընէ թէ Պիզմարք Իշխան, բնաւորութեան մեծ զօրութեամբ մը օժտեալ շատ մը մարդոց պէս, իւր մահուան մերձաւոր թուականը գիտնալու առանձնաշնորհումը կը վայելէ։ Իշխան - Նախարարապետը բազմիցս յայտարարած է թէ 1890 տարիէն առաջ չպիտի մեռնի, բայց 1894էն անդին ալ չպիտի ապրի, եւ որովհետեւ իւր մահուան թուականը, զոր ինքն իսկ որոշած է, հեռի չէ այլ եւս, բոլոր փափաքն է իւր օրերն՝ Հէրպէրթ Կոմսն՝ իւր տեղն անցունել, որով Գերմանիոյ ճակատագիրը վարելու գործը Պիզմարքեան գերդաստանին ձեռաց մէջ ապահովեալ պիտի մնայ։

—Տոպրուճայի դաւառն, որ Ռումանիոյ թագաւորութեան կցուելէն ի վեր բացառիկ դրութեամբ մը կը կառավարուէր, խնդիր մատոյց Ռումանիոյ Խորհրդարանին՝ յետ այսորիկ Ռումանիոյ ուրիշ մասերուն պէս կառավարուելու համար։

—Ինչպէս յայտնի է, դահաժառանգ Ռուսոյին մարմինը մինչեւ այս երեւջաբթի, այսինքն ամբողջ շաբաթը, ի տես դրուեցաւ ընտանեկան շրջանակի մը մէջ, ի կայսերական պալատն։ Կիւրակի առաւօտ կանուխ Պելժիոյ թագաւորը, թագուհին և գահաժառանգը մնան այն սենեակն ուր մարմինը դրուած էր։ Շատ սրտառուչ տեսարան մը տեղի ունեցաւ։ Թագաւորն և թագուհին ծնրադրած իրենց փեսին վրայ կուլային դառնապէս։ Ֆրանց Եղէֆ Կայսր ամեն օր որդւոյն մարմնոյն քով կուգար և ծնրադիր կ'աղօթէր, և նոյն օրն ալ իւր խնամիներուն հետ ծնրադրած ընդերկար աղօթեց։ Իշխանին դէմքն, որ առջի օրերը շատ փոխուած չէր եւ պայծառութիւնը պահած էր, վերջին օրերը տխուր փոփոխութիւն մը կրեց։ Դէմքնուն վերքն ալ, որ առջի օրերը դոց էր, եղաքերը բոլորովին բաց թողուցեալ կայսեր հրամանաւ։ Թէեւ մարմինն ի տես հասարակութեան դրուած չէ, բայց կառավարական ծառայութեան մէջ գտնուող անձինք և ժողովրդեան պատուաւոր դասուն վերաբերող երեւելիք հաղարներով անցան դագաղին առջեւէն, վերջին ակնարկ մը նետելով նորա վրայ որ երբեմն երիտասարդաց ամենէն յուսալիցն և ամենէն փառաւորը կը համարուէր։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Թառն ժողովի ի նիստ գումարեցաւ երէկ ի խորհրդարան Ղալաթիոյ ընդ նախագահութեամբ Ամն. Ս. Պասրիարք Հօր և ատենապետութեամբ Վսեմ. Մաքսուտ Սիմոն պէյի։

Ժողովը նկատողութեան առնլով Զմիւռնիոյ երեսփոխանական ընտրութեանց առթիւ ծագած անհամաձայնութիւնն և Տեղապահի հրաժարման խնդիրը, վճռակին պատրիարքական փոխանորդ կարգեց Այվազեան Արժ. Յովսէփ Մ. վարդապետն որպէս զի Զմիւռնիա երթալով խաղաղութիւնը վերահաստատէ, դաւառական ընդհանուր ժողովին ապակս անդամոց ընտրութիւն ամբողջացնէ և առաջնորդական ընտրութիւն կատարել տայ։

Տ. Յովսէփ վարդապետ կը պահէ միանդամայն Ղալաթիոյ քարոզչութեան ինչպէս նաև կեդրոնական ու թաղային վարժարանց կրօնի ուսուցչութեան պաշտօններն։

Ժողովը Տիգրանակերտ համար առաջնորդական ընտրելեաց հետեւեալ ցանկը պատրաստեց։

Դեր. Գրիգորիս Եպիսկ. Ալէքսիանեան
» Մամբրէ » Հրաւիրակ Երուսաղեմի
Արժ. Վահան վրդպ. Յակոբեան

Ժողովն ուշադրութեան առաւ Ռոտոսթոյի առաջնորդական տեղապահ Դեր. Հմայեակ եպիսկոպոսի տեղեկագիրն և որոշեց հրահանգ տալ որպէս զի ամբողջացնէ տեղւոյն դաւառական ընդհանուր ժողովն, որ կազմալուծեալ վիճակի մէջ էր։

Ժողովն զբաղեցաւ նաև յարաբերական և այլ խնդիրներով։

Երէկ Թառն ժողովոյ գումարումէն առաջ Կրօնական ժողովն ի նիստ գումարեցաւ ի խորհրդարան Ղալաթիոյ ընդ նախագահութեամբ Դեր. Խորէն Արքեպիսկոպոսի և զբաղեցաւ այլ և այլ անհատական խնդիրներով։

ՆՈՒԻՐՈՒԱՏՈՒՈՒԹԻՒՆՔ

Խասգիւղի Աղքատաց Խնամակալութիւնը մեծաւ շնորհակալութեամբ կը ծանուցանէ հետեւեալ նուիրատուութիւնքն զոր բարեհաճած են ընել բարեսիրտ ազգայինք՝ թաղիս բազմակարօտ աղքատաց, Ս. Ծննդեան տօնին առթիւ։

Վսեմ. Արիկ էֆ. Ունձեան 100 ղրշ.
Մեծ. Յարութիւն էֆ. Սարգիսեան 30 օսմ. մես.
Մեծ. Սարգիս էֆ. Զորեսանեան 80 օսմ. հաց.
Մեծ. Ֆիլիբ էֆ. հացագործ 30 օսմ. հաց.
Մեծ. Կարապետ էֆ. Հայրապետեան 20 ղրուշ.
Մեծ. Կարապետ էֆ. Պետրոսեան 20 օսմ. հաց։

Ի գիտաց Խնամակալութեան Խասգիւղի
Ասենապետ Ասենապետ
Գր. Մարգարեան Գր. Թէրզեան
24 յունվար 1889
Խասգիւղ

ՆԱՄԱԿ ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Մեծ. Խմբագիր Աբեղեան լրագրոյ.

Պէօճիւրտէրէ, 25 յունվ. 89

Ձեր Յունվարի 24, երէկուան թերթի մէջ կարդացի մի նամակ՝ Պ. Գ. Նիկողոսեանի ստորագրութեամբ, որն որ անշուշտ հիմնուած էր՝ Պ. Նամակագրին հաղորդեալ սխալ տեղեկութեանց վրայ, և զորս այժմ պարտ անձիս համարիմ լուսաբանել ի սէր ճշմարտութեան։

Մի անգամ ընդ միշտ յայտարարելով թէ սկզբից մինչեւ այժմ, բոլոր ներկայացմանցս առաջնորդողն ու խմբապետը Պ. Պ. Մաղաքեանն էր։ Նա էր ինձ հրաւիրողը Խմբին կազմակերպողն ու վարձատրողն, ու շատուն մասամբ մասնակից եղողը։

Նա էր նոյնպէս այս վերջին Ուրիէլ Աքօսթայի ներկայացմանն ինձ հրաւիրողն, և նախապէս սակարկեալ հատուցումն ինձ խոստացողն, ուստի ես արուեստագէտս, ոչ իրաւունք՝ և ոչ էլ ժամանակ ունիմ գիտնալ թէ ի նպատս Պ. Մաղաքեանի՞ է արուելիք ներկայացումը, թէ այլոց։ աղքատաց թէ հարստից։ Իմ այժս և միայն հազիւ ինձ բաւեն պատրաստուիլ դերիս մէջ՝ և ներկայացնել զայն ըստ իմ կարողութեան։

Սա էլ պէտք է յայտնեմ որ այս վերջին ներկայացման երեկոյին բաց ի Պարոն Մաղաքեանից ոչ ոքին չեմ տեսել, ոչ մէկի հետ բանակցութիւն չեմ ունեցել, եւ ոչ ոքից առաջարկութիւն՝ կամ խնդիրք չեմ լսել։

Այլ ինչ վերաբերում է իմ անհատական մարդկային պարտուցս, դոցանումս ոչ ոք իրաւունք չունի ինձանից համար պահանջել, թո՛ղ այդ միայն դատեն նախ Աստուած, և յետոյ ինձ լաւ ճանաչող մտերիմներս։

Մատուցանելով Ձեզ իմ խորին յարգանքը, մնամ ձերդ.

Պ. Հ. ԱԴԱՄԵԱՆ

ՄԵԾ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

ԴԻՄԱԿԱՒՈՐ ԵՒ ԱՆԴԻՄԱԿ

Ի ՆՊԱՍՏ

ԱԶԳ. ՀԱՅՈՒՀԵՆՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ընդ հովանաւորութեամբ

ՎՍԵՍ. ՅՈՐՈՒԹԻՒՆ ՓԱՇԱՅԻ ՏԱՏԵԱՆ

Ի ՆՈՐ ԹԱՏՐՈՆ ԲԵՌԱՅԻ

4/16 Փետրուար, շաբաթ երեկոյ

ՄՈՒՏՔ ՄԷԿ ՕՍՄ. ՈՍԿԻ

ԿԱՐԳԱԴԻՐ ՄԱՍՆԱԿՈՒՄԸ

Յ. էֆէնտի Նորատունկեան Ասենապետ
Գ. » Շամտանճեան Ասենապետ
Ն. » Ներսէսեան Դանդիպետ
Ասպետ Ա. Խ. Զուկնդ
Լ. պէյ Փափազեան
Տ. էֆէնտի Եսայեան
Ն. » Փափազեան
Ն. » Վէքիլ
Պ. » Պէրպէրեան

ԱՆԴԱՄՔ ՅՈՆԶՆԱԺՈՂՈՎՈՅ

ՏԻԿՆԱՑՔ

Ասպրօ Աղասի
Երկանեան Վարդուհի
Խաչեան Վերգինէ
Թաշճեան Նեքտար
Ինճէեան Պէտրոս
Հալաճեան Թագուհի
Մամիկոնեան Տիրուհի
Նեվրուզ Երանուհի
Նորատունկեան Մաքրուհի
Ներսէսեան Նարթիկ
Շամտանճեան Պէտրոս
Պիլոռեան Մարիամ
Զունդ. Ն. Ասպետուհի
Տավուտեան Մաննիկ
Տատեան Տ. Տիրուհի
Փորթուքալ Քարօլին
Սըմաճեան Սօֆի
Օրիորդ Խոնչէկիւլ Նոյեմի
» Միւհէնտիսեան Մարի

ՏԵԱՐՔ

Աղաբեկեան Սարգիս էֆէնտի
Եէնիտունեան Տիմոթրաքի »
Խաչեան Յովհաննէս »
Իզզէթ պէյ Նախ. Ասէսոր Ս. դատարանի
Իսրահիմ պէյ Ս. Աշրդ. Ազգ. Գործոց Նախարարութեան
Տէր Լէմուան Լ. Տիրէն Քէօսէ Լէյնի Պանդիպետ
» Լէվի Ռօպէռ
Խումարեան Կարապետ էֆ. Ազգամ ֆէնաբեկ Ասենի
Հալաճեան Բարսեղ էֆ.
Ղալիպ պէյ Տիրէն Դատական Ճիւղին Ազգ. Գործոց Նախարարութեան
Մաքսուտ Սիմոն պէյ
Մաղկար » Նախ. Բանքի
Մամիկոնեան Միքայէլ էֆ. Տիրէն օրար Ընդհանր. Սպասք. Դրան
Նաւում էֆ. Հրաչ. Բ-դրտ. Ազգագ. Գործոց Նախարարութեան
Նուրեան էֆ. Ազգամ Պէտ Խորհրդոյ
Նեվրուզ Արթինի խան Ս. Բարձրագոյն Պարբերական

Մեծ. Ֆիլիբ էֆ. հացագործ 30 օսմ. հաց.
Մեծ. Կարապետ էֆ. Հայրապետեան 20 ղրուշ.
Մեծ. Կարապետ էֆ. Պետրոսեան 20 օսմ. հաց։

Ի գիտաց Խնամակալութեան Խասգիւղի
Ասենապետ Ասենապետ
Գր. Մարգարեան Գր. Թէրզեան
24 յունվար 1889
Խասգիւղ

ՆԱՄԱԿ ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Մեծ. Խմբագիր Աբեղեան լրագրոյ.

Պէօճիւրտէրէ, 25 յունվ. 89

Ձեր Յունվարի 24, երէկուան թերթի մէջ կարդացի մի նամակ՝ Պ. Գ. Նիկողոսեանի ստորագրութեամբ, որն որ անշուշտ հիմնուած էր՝ Պ. Նամակագրին հաղորդեալ սխալ տեղեկութեանց վրայ, և զորս այժմ պարտ անձիս համարիմ լուսաբանել ի սէր ճշմարտութեան։

Մի անգամ ընդ միշտ յայտարարելով թէ սկզբից մինչեւ այժմ, բոլոր ներկայացմանցս առաջնորդողն ու խմբապետը Պ. Պ. Մաղաքեանն էր։ Նա էր ինձ հրաւիրողը Խմբին կազմակերպողն ու վարձատրողն, ու շատուն մասամբ մասնակից եղողը։

Նա էր նոյնպէս այս վերջին Ուրիէլ Աքօսթայի ներկայացմանն ինձ հրաւիրողն, և նախապէս սակարկեալ հատուցումն ինձ խոստացողն, ուստի ես արուեստագէտս, ոչ իրաւունք՝ և ոչ էլ ժամանակ ունիմ գիտնալ թէ ի նպատս Պ. Մաղաքեանի՞ է արուելիք ներկայացումը, թէ այլոց։ աղքատաց թէ հարստից։ Իմ այժս և միայն հազիւ ինձ բաւեն պատրաստուիլ դերիս մէջ՝ և ներկայացնել զայն ըստ իմ կարողութեան։

Սա էլ պէտք է յայտնեմ որ այս վերջին ներկայացման երեկոյին բաց ի Պարոն Մաղաքեանից ոչ ոքին չեմ տեսել, ոչ մէկի հետ բանակցութիւն չեմ ունեցել, եւ ոչ ոքից առաջարկութիւն՝ կամ խնդիրք չեմ լսել։

Այլ ինչ վերաբերում է իմ անհատական մարդկային պարտուցս, դոցանումս ոչ ոք իրաւունք չունի ինձանից համար պահանջել, թո՛ղ այդ միայն դատեն նախ Աստուած, և յետոյ ինձ լաւ ճանաչող մտերիմներս։

Մատուցանելով Ձեզ իմ խորին յարգանքը, մնամ ձերդ.

Պ. Հ. ԱԴԱՄԵԱՆ

ՈՒՆՁԵԱՆ Արիկ էֆ.
Զայեան Իլիաս » Օրն. Խորհրդարանի Ատ. Գործոց Նախարարութեան
Տէր Պօղոս Հ.
Սամանճի Գէորգ էֆ.
Տատեան Տիրան պէյ Դեր. Տէօրէն Հիւպատ. Դիւանի
Փորթուքալ Միքայէլ էֆ. Տէօրէն Երկրագործական Պանդուխտ
Քուլումճեան Պետրոս էֆ. Տէօրէն Առաջաց Լանգաց
Օտեան Խաչիկ էֆ. Տէօր. Հիւպատոսարանի Սենեկի Ատ. Գործոց Նախ.

«ԱՐԵՒԵԼՔ»Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Առ Ե. Մ. Ա. «Հայկայ Շրջանն», թէպէս գիտէք, 1460 տարի է։ 1888 օգոստ. 11ին կիրարդ Շրջանը լրացած լինելով (1460×3=) 4,380դ տարին ևս լրացած է, և նոյն օրը, Դատապարտ 1 մ., մտած ենք 4,381դ տարին, Դ. Շրջանի առաջին տարին, յորում ենք այժմ։ Ասոր հակառակ թուագրութիւն անուշադրութեան արգիւնք է։ Աւելի մանրամասն բացատրութեանց համար տե՛ս «Արեւելք»ի 1888 օգոստ. 11ի թիւը։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱՍՏԻՃԱՆԻ ԵՒ ՊԱՏՈՒԱՆՆԱՆՔ

Սանկիպ Միւթէմամիզ ատիճան տրուեցաւ Հանրային Պարտուց Վարչութեան դիւանապետ Մուսթաֆա պէյի, Սէլանիկի Հանրային Պարտուց Վարչութեան տնօրէն Բիզա պէյի եւ նոյն վարչութեան ընդհանուր քննիչ Հիւսէյին էֆէնտիի։

Սանկիպի երկրորդ ատիճան՝ Պասրայի կուսակալ Հիւսայէթ փաշայի ա-ներորդդին ձէմիլ պէյի։

——

Երրորդ կարգի Մէճիտկիպ պատուանշան տրուեցաւ Անտոն Ալիբ էֆէնտիի։

Չորրորդ կարգի Մէճիտկիպ՝ Սելանիկի բժշկներէն Յօզթէօռ Լիբվիչի։

——

Ի Բ. ԴՈՒՌՆ

Աւստրիական դեսպան Պ. տը Քալիչ Նախընթաց իրիկուն ժամ 11½ին Բ. Դուռը գնաց և տեսակցեցաւ Բարձր. Մեծ-Եպարքոսին ու Արտաքին գործոց Վսեմ. Նախարարին հետ։

—Անտառաց և հանքաց ընդհանուր տնօրէն Գոյլյուճեան Պետրոս էֆէնտի երէկ Բ. Դուռը գնաց և երկարօրէն տեսակցեցաւ արտաքին գործոց Նախարարութեան խորհրդական Վսեմ. Յարութիւն փաշայի հետ։

——

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆՔ Ի ԳԱԼԱՏԱ

Վեհ. Սուլթանը նկատելով որ Գալատայ գաւառաց ոմանց մէջ ամուսնութիւնք գժուարութեանց կը հանդիպին ինչ ինչ ապօրէն սովորութեանց առթիւ և թէ այս պատճառաւ սերնդոյ աճումը կը նուազի, հրամայած էր ընդհանուր կերպիւ արգիլել այդ կարգի վարքի և ապօրէն սովորութիւններն։

Արդ, Ներքին գործոց Նախարարութիւնը նկատելով որ այլեւայլ տեղեր կը շարունակուին այդ տեսակ սովորութիւնք, եպարքոսական հրամանաւ հրահանգ ուղղեց ամէն կողմ արգելուլ այդ սովորութիւնն և ուշադիր լինել որպէս զի այդ արգելքը պահպանուի և ամուսնութիւնք կատարուին օրինաւոր շրջանակի մէջ։

——

ՎԵՑՆՈՑ ԴՐԱՄՆԵՐԸ

Երմոական Նախարարութիւնն, ըստ եպարքոսական հրամանի, հրահանգ ուղղեց ամէն կողմ թէ վեցնոց դրամներն, որոց շրջաբերութենէն վերցուիլն որոշուած է, մինչեւ երմոական 1305 տարւոյ մարտի վերջն ընդունին։ Հետեւաբար կառավարական բոլոր մասունքներն ըստ առաջնոյն պէտք է ընդունին այդ դրամները մինչեւ նոյն պայմանաժամի վերջը։

——

Պ. ԲՈՒՆՏՈՒՐԻՈՒԴԻ

Հելլէն նախարարութեան կէս-պաշտօնական լրագիրը՝ Բուլենէնթ կը հերքէ այն զրոյցներն որք վերջերս տարածուեցան Ամէնք և ի կ. Պոլիս, թէ մայրաքաղաքիս հելլենական դեսպան Պ. Բուտուրիտդի եւ կոչուելով իւր կառավարութեան կողմէ, անոր պիտի յաջողէ Մավրօկորտաթօ իշխանն և կամ Յունաստանի արտաքին գործոց Նախարարը։ Բոլոր այս զրոյցք անհիմն կը նկատուին։

——

ՀԱԼԻՊ

Զեռնհաս իշխանութիւնը տեղեկանալով որ Հալէպի նահանգի հասոյթներէն կեղծ թղթերու միջոցաւ ստակ վճարուած է ի հաշիւ զինուորական ծախսից և թէ ուրիշ զեղծումներ ևս տեղի ունեցած են, յատկապէս քննիչներ կարգած է խնդիրն ստուգելու համար, Այդ քննիչք, որք են Բ. Դրան կողմէ՝ Պետական Խորհրդոյ վերաքննիչ ճիւղին ընդհանուր դատախազ Եանքօ էֆէնտի եւ երմոական Նախարարութեան կողմէ՝ Սիւլէյման պէյ, ստացած են իրենց պաշտօնին և այդ խնդրոյն վերաբերեալ բոլոր գրութիւններն և այս շաբթու հալէպ պիտի ուղեւորին։ Քննիչք ճամբու ծախք և իրենց այդ պաշտօնի տեւողութեան ընդհանուր յատուկ ամսաթոշակ պիտի ստանան։ Տեղական կառավարութիւնն ոգէն ձեռնարկած լինելովնախանական գնութեանց կը յուսացուի թէ այդ խիստ երկու ամսէն աւելի չի կրկնի։

——

ՈՒՐԲԵԻՀԵԼԼԵՆԱԿԱՆ ԵՐԵԱԹՈՒՂԻՔ

Պիրէոն-Աթէնք-Լարիսա երկաթուղւոյն շինութեան համար կատարուած բնակցութիւնք յաջող վիճակի մէջ և, կ'ըսէ Էֆէմերիս, և կը յուսացուի ո երեքի մէջ յանգին ի մտոյ։ Այդ գծ, ինչպէս յայտնի է, պիտի մեկնի Պրէոնէն, պիտի անցնի Աթէնք, Թեպէէ և Լամիա, թուրքերէն հելլենական սահմանագլուխն հասնելու համար, Լարիսայէն անցնելէ յետոյ։ Այս գիւաւոր գծէն զատ, ճիւղեր պիտի հատատուին, մին դէպ ի Թալիս երկրող և միսը Լամիան նաւահանգիստն։ Գծին ամբողջ երկայնութիւնը պիտի լինի 390 քիլոմէտր, որուն 345ը գիւաւոր գծին համար և 45ը ճիւղերուն համար։ Լայնութիւնը պիտի լինի 1 մէտր 40 սանտիմ։ Ընկերութիւնն ատոնութիւն պիտի ունենայ սոյն երկաթուղին շինելու և շահագործելու 99 տարի։ Շինութեան ծախք հաշուած է մէն մի քիլոմէտրի համար 25,000 ֆր. գիւաւոր գծին, և 150,000 ֆ. ճիւղերուն, ընդ ամենը 77,475,000 ֆրանք, առանց հաշուելու հողերու գման ծախքն որ 2,400,000 ֆրանքի կհասնի կ'ըսեն։ Ընկերութիւնը պարտուր է յիշեալ գումարով շինել երկաթուղւոյ գիծն ու ճիւղերն, կայարաններ կառուցանել ինչպէս նաեւ գնել ամէն պիտոյք՝ 30 վագրաշարժ, 39 վագոն Ա. կարգի, 640՝ Բ. կարգի, 1600՝ Գ. կարգի և ուրիշ 500 հատ եւս զանազան տեսակներ։ Շինութեան պայմանաժամը պիտի լինի երեք ու կէս տարի, սկսեալ շինութեանց ձեռնարկուած թուականէն որ պայմանագիրը վաւերացնող հրամագրոյն հրատարակումէն 2 ամիս յետոյ տեղի պիտի ունենայ։

Շինութեան ծախքն հոգալու համար 90 միլիոն ֆրանքի փոխառութիւն մը պիտի կնքուի։

* * *

Թարիխ, արտատպելէ յետոյ Լ. Էրբտի վերոգրեալ տեղեկութիւնները, կը յարէ։ «Հելլենական կառավարութեան իւր երկրին մէջ շինելիք երկաթուղւոյ համար ոչինչ կրնանք ըսել։ սակայն բնականաբար վերապահութեամբ պէտք է ընդունիլ նոյն գծին օսմանեան գծերու հետ միացման առթիւ եղած բացարձակ յայտարարութիւնները։ Մեր տեղեկութեանց նայելով առայժմ յայտնի չէ թէ օսմանեան գծերը պիտի երկարաձգուին մինչեւ հելլենական սահմանագլուխն և թէ միացումն ինչ կերպով պիտի լինի։ Այս առթիւ ասա կատարուած բանակցութիւնք ևս տակաւին վերջնական հանգամանք մը ստացած չեն։»

——

ՕՏԱՐ ՊԱՏՈՒԱՆՆԵՆԱՆՔ

Ֆրանսական Հանրապետութեան նախագահը Պատուոյ Լեգէոնի պատուանշանի հրամանատարութեան աստիճանը նուիրած է Արտաքին գործոց նախարարութեան մէջթուգճի Միւնիր պէյի։

——

ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐՈՒ ՓՈՆՈՒԹԻՒՆՔ

Կը յիշուի թէ, կ'ըսէ Թարէէ, Հալէպի Զոր դատական կառավարիչ Թէվֆիզ փաշայի պաշտօնավարութեան դէմ ինչ ինչ բողոքներ եղած էին և այս առթիւ յատկապէս քննիչ պաշտօնեայ մը ղրկուած էր։

Արդ, քննիչ պաշտօնեային իւր պաշտօնն աւարտած լինելով այժմ ձեռնարկած է դատարանին միւս պաշտօնատանց քննութեան։

—Ըստ տեղեկութեանց Թարէէի, Պետական Խորհրդոյ յանձնուած է քննել Մալաթիոյ նախորդ կառավարիչ Բիզա էֆէնտիի դէմ եղած բողոքն։

Պետական Խորհուրդը նոյնպէս կը շարունակէ հարցաքննել Մաղկերտի նախորդ կառավարիչ Ապտիւլգատէր փաշան ինչ ինչ խնդրոց պատճառաւ և իւր կարծիքն յայտնելու համար կ'սպասէ նոյն դատարանէն դալիք տեղեկութեանց։

——

ՖՐԱՆԳՕ-ՕՆԿՐՈՒԱԶ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ֆրանգօ-Օնկրուազ ապահովագրական ընկերութեան ընդհանուր քննիչ Նաղաբէթ էֆէնտի Եաղճեան Ենկիւրի ուղեւորած է, այնտեղ ևս մասնաճիւղ մը բանալու համար իւր ներկայացուցած ընկերութեան։

Վեհ. Սուլթանը բարեհաճած է 150 օսմ. ոսկի շնորհել ի նպաստ Մասսնական Պարահանդիսին որ տրուեցաւ ի Նոր Թատրոն Բերայի։

—Մախսուսէի վարչութիւնը կղզիներու երթեւեկութեանց համար ընդարձակ շրջեցնաւ մը յանձնարարած է յԱնգլիա։ Այս շրջեցնաւ մէկ ժամուան մէջ 16 մղոն արագութիւն պիտի ունենայ։ Վարչութիւնն արդէն վճարած է նոյն շրջեցնաւն գնոյն, որ է 12000 ոսկի, առաջին կարգաւորը։

—Ներքին գործոց նախարարութիւնը հրահանգ ուղղեց ամէն կողմ թէ յետ այսորիկ Մախսուսէի շրջեցնաւք մի միայն աղքատ ուխտաւորներն և ուղեւորները ձրի պիտի փոխադրեն։

—Մանասթիրի Պիթրազարը կոչուած տեղն ամսոյս 13ի ուրբաթ գիշերն հրդեհ ծագելով քառասուն հինգ խանութներ այրեր և տասնի չափ խանութներ ևս փլցուեր են հրդեհի արծարծման առաջքն առնելու համար։ Ի Մանասթիր հանգանակութիւն մը բացուեր է ի նպաստ հրկիզելոց։

—Վերաքննիչ ատենի պատժական ճիւղին նախագահ Հիւսէյին Բիւշրի էֆէնտի, որ մէկ քանի օրէ ի վեր անկողնոյ կը ծառայէր, բոլորովին ապաքինած լինելով երէկ իւր պաշտօնատեղին գնաց։

—Նախընթաց օր Սպարապետի Դրան հրապարակին վրայ կառապան մը իւր կառքին կապածները կը շտկէր երբ ձիերէն մին խրտչելով կառքին ձողն կոտրեց և սկսաւ արշաւել։ Հրապարակին վրայ երկու մարդ գետին ձգեց, որք թեթեւապէս վիրաւորեցան։ Յետոյ, ձին սկսաւ արշաւել դէպ ի Շանզատէ Պաշը, սակայն ոստիկանք վրայ հասնելով բռնեցին։

—Պասրայի Նորընտիր կուսակալ Հիւսայէթ փաշա և Նէֆէյտի Նորընտիր կառավարիչ Աքիֆ փաշա, որք ստացած են իրենց պաշտօնի վերաբերեալ հրահանգներն, յառաջիկայ շաբաթ օր իրենց պաշտօնատեղիները պիտի ուղեւորին։

—Պալատի մէջթուպճի Սատրգ պէյ, որ ժամանակէ մը ի վեր արձակուրդով մայրաքաղաքս կը գտնուէր, մէկ քանի օրէն իւր պաշտօնն աւարտելէ յետոյ Կարին պիտի երթայ։

—Օտեսայի մէջ հրատարակեալ Վօսթէնի լրագրոյ ի Թուրքիա մուտքն արգիլուեցաւ կայս. կառավարութեան կողմէ։

—Փիլիպէի Ֆրանսական դեր-հիւպատոս Պ. Կիլլաս մայրաքաղաքս եկած է։

—Տարտանելի նեղուցին հրամանատար Ասաֆ փաշա, որ մէկ քանի օրէ ի վեր մայրաքաղաքս կը գտնուէր, երէկ իւր պաշտօնատեղին ուղեւորեցաւ։

—Սէլանիկի Ցոյն մետրոպոլիտ Տ. Լիդորիոս երէկ մայրաքաղաքս ժամանեց։

—Մարսիլիայէն Զմիւռնիա հասած հեռագիրք կը ծանուցանեն թէ թեթեւ բարձրացում մը տեղի ունեցեր է այդ գաւառէն զրկուած սեւ չամիչներու գնոյ վրայ։ Այս պատճառաւ Զմիւռնիոյ հրապարակին վրայ գործեր եղեր են։

—Ի Սպանիա հրատարակեալ Էնոռա լրագրոյն ի Թուրքիա մուտքն արգիլուեցաւ։

—Աւստրիոյ գահաժառանգին մահուան առթիւ վաղը Պէշիլբաշէրի լատինական եկեղեցւոյն մէջ հոգեհանգստեան պաշտօն մը պիտի կատարուի։

—Անցեալ գիշեր ի Սամաթիա Լէպլէպիճի Բէօշէսի անուն տեղն կօշկակար Պետրոսի տան դուռը բռնկած էր դիւրավառ նիւթերու միջոցաւ, որք դիտմամբ ձգուած էին։ Դրացիք տեսնելով անմիջապէս օգնութեան փութացին և վառանգին առաջքն առին։ Ոստիկանութիւնը կասկածելով Միհրան անուն դատարկաշրջիկի մը վրայ, որ Պետրոսի ազգականներէն է, ձերբակալեց զնա և հարցաքննութեան ենթարկեց։

—Պետական Խորհրդոյ անդամ և պաշտօնէից ընտրութեան յանձնաժողովոյ նախագահ Բիզա պէյ, որ ժամանակէ մը ի վեր հիւանդ էր, բոլորովին ապաքինած լինելով մէկ քանի օրէն իւր պաշտօնին գլուխը պիտի անցնի։

ՆՈՐ ԹԱՏՐՈՆ ՖՐԱՆՍԱԿԱՆ

ԲԵՌԱՅԻ

Այս գիշեր ԼԱՖՐԻՖԷԻՆ

L'AFRICAINE

ԱՐՇԱԿ Գ. ՇՄԱՒՈՆԵԱՆ

ԶԱՌՑԵԱԼ ՓԱՍՏԱԲԱՆ

ԺԸՆԵՎԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԷՆ

Պանջէ-Գափու, Բասիմ-Փաշա խան, բիւ 10

Կ. ՊՈԼԻՍ

Դատական փոխանորդութիւնք, խորհրդակցութիւնք, խմբագրութիւն և թարգմանութիւն դատական, առեւտրական և այլ գրութեանց թուրքերէն, Հայերէն, Անգլիերէն, Գաղղիերէն։ 265 3—3

ԽԼՈՒԹԻՒՆ

Եւ ըզգիւնք գլխու մէջ։ Մինչոց իւր տան մէջ բուժելու զայնս, առանց ընդհատելու իւր պարապմունքն։ 30 սանդիմ ղրկելով կ'ստացուի 132 երեսի պատկերազարդ տետրակ մը։ Դիմել առ 18

M. Nicholson, 4, rue Drouot, Paris

ՏՈՒԲԹՈՒՐ ԶՕՀՐԱՊ

Բիլիչ Շէյրի գաղղիական Լա-Բէ հիւանդանոցին, վարչիմ ներքին բժիշկ Լիսոնի եւ Սէնդ Էդիէնի հիւանդանոցաց (ի Գալատա), Թղթակից անդամ Լիոնի բժշկական ազգային ընկերութեան, մասնագէտ Ա. կանոնի Կոլորդի եւ Բիթի հիւանդութիւններուն եւ երիկարական դարմանաց, այցելութիւնք կ'ընդունի առաւօտեան (ժամ 10 էն 12) իւր տունն որ ի Մեծ փողոց Բանկալթիի թիւ 73, կէս օրէն վերջ ի Սգամալ Պահճէ գարու Մէրհամէթճեան դեղարանն թիւ 13, ուր ուրբաթ օրերը ձրի կը դարմանէ։ 4 33—81

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ

ԱԺԱՆՍ ՀԱՎԱՍ

ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒՄ Ի ՖՐԱՆՍԱ

Փարիզ, 6 փետր.

Պ. Կիւյօ, արմատական երեսփոխանը, դատական նախարար անուանեցաւ փոխանակ Պ. Ֆէռուլյայի։

ԴՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՅ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 26 յունվար
Դահեկան

ԸՆԹԱՑՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՅ

3 ամիս Լոնդրայի վրայ (Պանքայի)	110	7/8
3 » » » (վճռական)	110	1/2
3 » Բարիզի » (պանքայի)	22	82 1/2
» » » (վճռական)	22	90

Օսմանեան Քոնսոլիտ

Երէկ երեկոյ գոց. (Միաց. 1. Սերի	17	16
Պօրսային գոցուելէն վերջը »	17	13
Բերայի մէջ »	—	—
Առաւօտուն բացուեցաւ »	17	18
կէս օրին »	17	19

ԻՍԹԻԳՐԱԶԸ ՏԱՖԻԼԻ

Երէկ երեկոյ	43	26
Այս առաւօտ	43	27
կէս օր	43	27

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԹԼԹՈՅ

Փոխառութիւն	Ա. Սերի	29	10
»	Բ. »	16	30
»	Գ. »	17	18

ԲԱԺՆԵՏՈՒՄՔ

Սօսիէթէ ժէնէրալ	Անգլ. Լիր.	4	23
Գրէտիթ ժէնէրալ	Օսմ. »	9	1
Պանք տը Փարիզ	» »	7	13
Սօս. Շանժ է վալէօր	» »	4	33
Թրամուէյ	» »	485	
Բուսմէլի երկաթուղի	Ֆր.	49	3/8
Օպլիկասիոն տը Բրիօրիթէ	»	—	—
Բաժնեթուղթ Լավրիսմի	»	125	

ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄՈՅ

Օսմանեան ոսկի	ղրշ.	100	
20 ֆրանքնոց	»	88	2
Անգլիական ոսկի	»	114	
Իմպերիալ	»	91	10
Քրիմիոց	»	51	10
Լուսպլի Թղթադրամ	»	8	48
» արծաթ	»	77	20
Մէճ. արծաթ (տարբ)	»	168	36
Վեցնոց	»	104	
Չինոնոց	»	104	
Մեթալիք	»	102	
Թասքիլ	»	10	

ԵՒՐՈՊ

լու մեծ ծարաւ մ'ունէր ի բազմաց հետէ, և ահա բարեպատեհ առիթը կը ներկայանայ իւր սոյն պատուէրը զոհացնելու։ Ցառաջնուն, ճշմարտութիւնը հարկ է խոստովանիլ, մեր ընդարձակ եկեղեցին ամայի էր բոլորովին Խատարադի առեն։ քանզի ամենայն ոք Բագոսի տուներուն մէջ կ'երթար անցնել իր ժամանակն։ Բայց այժմ եկեղեցին չբաւէր բազմամբոխ ժողովրդեան։ Ծերք և երիտասարդք՝ կիւրակէ օրերը վաղ քաջ ընդառաւօտն՝ կը դիմեն խուռներամ ի տաճարն Աստուծոյ՝ Սրբ։ Հօր հոգերուխ, իմաստալից քարոզէն չզրկուելու համար։ Բահանայք ժամիտ ի շուրթն ման կը դան այժմ յեկեղեցւոյ, վասն զի ի մէն մի քայլ առատօրէն կը տեղայ տուփին մէջ հնչուն մետաղն։ անիծեալ մեռա՛ղ, ի քթթել սկսն անհաւատն կ'ընես հաւատացեալ, զանխօսն՝ խօսուն։ ժողովրդական է Գ։Ր։ Դիմաքեան՝ ժողովրդական են իւր քարոզք, ոչք լի են բարոյալից առակօք։ սահուն ու դիւրաթեք է լեզուն։

Քարոզո՞վ լոկ կը չատանայ Սրբազանն։ ոչ։ Իւրեան յանձնուած ազգօգուտ պաշտօնն ի գլուխ հանելու համար ձեռնարկած է ի գործ անցեալ երկուշաբթի օրէն ի վեր։ Ընդունեց առժ։ թաղ։ խորհրդոց հրաժարականներն և ըստ տրամադրութեան սահմանադրական օրինաց հարկ եղած հրահանգները տուաւ յընտրութիւն նորոգ խորհրդոյ։ Ցառաջիկայ կիւրակէ տեղի պիտի ունենայ Ս։ Խաչ թաղի խորհրդոյ ընտրութիւնն, յայնորդին և Ս։ Թադ։ թաղի։ Յետ ընտրութեանց պիտի ձեռնարկէ ընդհուպ վերակազմել Երեսփ։ և Քաղ։ ժողովները։ Սեւադէմ, չահամով անձինք ոմանք սկըսած են գլուխ բարձրացնել և կուսակցական ոգին արծարծել վերստին։ սակայն քաջայոյս եմք թէ՝ ժողովուրդը զայս նուազ ողջմտութիւն պիտի ունենայ լոկ իւրեան ուղեցոյց և սոյն ընտրութիւնք պիտի կատարին օրինաց սահմանին մէջ ամենայն անդորրութեամբ ի շնորհս Սրբ։ Հօր շրջահայեցութեան և մեծ իմն խոհականութեան։

Ո՞ւստի ծագումն առած են սոյն կուսակցութիւնք՝ այք մերթ ընդ մերթ կը գան խռովել ազգին խաղաղ ու անդորը վիճակը, ցաւալի պատահարաց և անպատեհութեան պատճառ լինել։ Անձնական մնոտի չահերէ և գՀուռ նկատումներէ։ Դողալի է արդարև ունենալ կուսակցութիւններ, այլ ի շահ ազգին գործող, և ո՛չ ի ՁՆաս։

Ռոտոթոցի հայն ի բազմաց հետէ կը տառապէր հիւանդութենէ, չգիտեմք սակայն սրտի թէ՝ մոաց, և ի դարման իր ցաւոց մի փորձ բժիշկ կը խնդրէր թախանձագին Ազգ։ Պատրիարքարանէն։ Ահա, ազնիւ քաղաքացիներս, կը ներկայանայ Ձեզ Ազգին կողմանէ փայլուն վկայական ի ձեռին ունեցող մի փորձ հոգեւոր բժիշկ՝ որ կազմ և պատրաստ է սիրայօժար Ձեր հոգեկան դառնակսիծ ցաւոց և բազմաթիւ վիրաց վերայ բուժիչ պալասան դնելու։ Ցեռնեմք թէ՝ պիտի բարեհաճիք արդեօ՞ք ցոյց տալ նմա Ձեր երակն և ի վեր հանել մերկապարանոց ձեր վերքեր։

Քաղաքիս նոր կառավարիչը՝ Մահմուտ պէյ, հինգշաբթի օր ի ժամ տասն երեկոյեան հասաւ այստ։ Ամէն ազգի երեւելիք և դպրոցական մանկունք գացած էին ի դիմաւորութիւն, ի գլխաց Հայոց ևս Գեր։ Դիմաքսեան Սրբ։ Հայրն՝ հանդերձ քսան չորս երգեցիկ աշակերտօք։ Սոյն ընդունելութեան առեն հայ սանունք, անկեղծօրէն ըսելով, յաղթանակ տարին և Մահմուտ պէյի մասնաւոր ջերմագին շնորհակալեաց արժանացան։ Համայն ժողովրդեան մեր սրտագին շնորհակալիքն կը յայտնեմք առ ժըրաջան դատաւոս Ս։ Խաչ վարժարանի։

Ամենայն ինչ նոր է այժմ ի քաղաքիս։ կառավարիչը նոր, Սրբազանը նոր, ընդհ։ դատախազը նոր։ ահա ռոտոսթոցոյն համար գործունէութեան նոր թուական մը կը բացուի յանկարծուստ։ Մոռցէք ուրեմն, պատուական Ռոտոսթոցիք, ձեր հին ու փտած հաշիւներն, անկարեւոր ու գՀուռ վէճերն։ Եղէ՛ք միակամ, միահոգի վերաշինելու ձեր եկեղեցական և կիթեական անկիրպարան, անենանձելի վիճակ։ Այս բազմապահանջ դարուս մէջ՝ աշխատանք պէտք միայն և ո՛չ խօսք։

Ս։ Ա։

ՍԵԲԱՍՏԻՈՅ ՎԱՆՔԵՐՆ

Հետեւեալը քաղուած մ'է առ Ամն։ Ս։ Պատրիարք Հայրն ուղղեալ կարեւոր տեղեկագրոյ մը, ի մասին Սեբաստիոյ վանօրէից։

Քաջ գիտելով թէ Բարձր Սրբազնութիւնդ ի մէջ այլոց նպատակ կազմած էք վանական բարւոք կազմակերպութեանց խնդիրն, և նախանձախնդիր էք զայնս իրենց նպատակին ծառայեցեալ տեսնելու, ի դէպ համարիմք, ներկայիս, խոնարհաբար առաջի առնել Ձերդ Սրբազնութեան զնկարագիր յոռի մատակարարութեան և ոչ բարւոք կառավարութեան վանացն՝ որ ի վիճակիս։

Սառագրեալը գրէթէ տասն տարիէ աստի միաբան լինելով Ս։ Նշանի երբեմն համբաւաւոր մենաստանին, ցաւօք սրտի դիտած եմ իրաց այս ոչ բարւոք կացութիւն։

Ս։ Նշանի վանուց տեսարան ամէն բան կը պարզէ բարեպաշտ ժողովրդեան աչաց առջեւ, որ իւր սովորական նուէրներով կը խորհի պայծառ տեսնել այս հնաւանդ հաստատութիւնն։ սակայն հակառակ այս բոլոր զոհողութեանց և լրագրաց միջոցաւ բազմիցս եղած գիտողութեանց, այսօր յիշեալ վանքն աւերակի երեւոյթ մը ըստացած է։ Սոյն վանուց տարեկան հասոյթ կը նկատուի 1000-1200 ոսկւոյ գումար մը, մինչդեռ 200 ոսկւոյ ծախք մը ակներեւ չը նշմարուիր։ 20-23 տարի է աստի, վանքն իւր չքեղութիւններէն ըստ ամենայնի կը մերկանայ ատիճանաբար և 3-4 տարիէն անբան բուերու բնակարան պիտի ըլլայ։ այս սպառնալիք մը չէ, այլ ճշմարտութիւն մը՝ անկարօտ ապացոյցի, յորմէ խուսափիլ անկարելի է քանի որ վանական կազմակերպութիւն մը և խորհուրդ մը ըստ օրինի գոյութիւն չունի, երբէք հսկող չկայ սորա կալուածոց ամ մը հողին մշակութեան վրայ։

Քաղաքէս 10 ժամ հեռու Տայոցայ աւերակ վանուց ընդարձակ և բարեբեր հողերն անխնամ մնացած են և մաս մը նախապատիւ արտորայք չշինակայ գիւղացւոց ձեռքի տակ, մնացեալ մեծ մասն ալ, շատ տարիներէ աստի անմշակ թողուած է։ Աւելի ցաւալին է՝ քաղաքէս հինգ ժամ հեռու գտնուած Դգմաճ գիւղի մատ Ս։ Վանուցս ագարակն որոյ մէջ ժամանակաւ 6-7 հարիւր ոչխար և մաս մ'ալ կաթնատու կովեր կը ձմերէին։ Այժմ յիշեալներն սպառելէն զատ, սոյն ագարակի հողերն բոլորովին մերկացած են իրենց նախնի պայծառութիւնն և անհոգութեան մատնուած։

Հրեշտակապետի քառակառոյց վանքն կիսակործան կացութեան մը ենթարկուած։ քիչ օրէն բլուրի վրայէն գահավիժելու սպալի պատկերն կը ներկայացնէ։ այս վանուց մէջ պիտի հաստատուէր հողագործական վարժարան մը, հայ գիւղերէ շրջապատեալ լինելուն առթիւ։ այսօր պարզ դռնապան մը կը փութացնէ այս վանքի կործանումը և անմշակ մնացած ու լքեալ են բարեբեր հողերն, այս արտեր Պոլսոյ 700 քիլէ առ նուազն սերմ ընդունող տարածութեամբ կը հաշուի։ Պոլսեբնակ գիւղացի պանդուխտ ազգայինք ճշմարիտ պատմախօսք թող հանդիսանան և վկայեն այս իրողութեանց։

Դառնալով Ս։ Նշանի վանուց արդի կացութեան՝ ամէն ինչ առջինէն բոլորովին տարբեր կը տեսնուի։ ուխտաւոր մը չը կրնար գտնել ո՛չ կանոնաւոր սենեակ, ոչ օրինաւոր անկողին, և ոչ ալ չոր փըսիաթ մը, գոմերը զրկուած են իրենց ոչխարներէն, շտեմարաններն թափուր օդով լեցուած են։ յարդանոցներն ալ անձրեւներու խոնաւութեան տակ կը փտին։ եկեղեցւոյ գաւիթներն յենարաններու վրայ կրթնած կը տքան։ Խոհանոցն մրանոց մը դարձած է։

Գիշերօթիկ դպրոցի համար, անցեալ մամ Պատրիարքարանի կողմէ դրկուած դասատուն, ութ ամիս դատարկ մնալէ վերջ, գերեզմանի բացումը տեղաւ առանց վարժարանի բացման արժանանալու և այսպէս յիշեալ դասատուն պատուելին մշանջենաւոր մահոդութենէ մը ազատեցաւ և գնաց հանգչիլ ցուրտ շիրմին տակ, ինչպէս որ վարժուած էր ապրիլ, ցուրտ և խոնաւ սենեկի մը մէջ։ Սոյն վանուց ընդարձակ կալուածներն ու հողերն եւս վերոյիշեալ վանքերէն նախանձելի կացութիւն մը չունին։

Վանուց եկամուտն, տրուած բարեպաշտական նուէրներ, նուիրեալ իրողներն չ'եմք գիտեր ո՞ւր կերթան և ոչ ոք գիտակ է վանուց ունեցած թանկագին հնութեանց և հարստութեանց՝ եւ Աստուած գիտէ միայն թէ ո՞րքան մեծ կորուստներ ունի ազգը։

Վանքի մատակարարութիւն ու միաբանութիւն նախանձելի կացութեան վերածելու, հաշիւներ ներկայացնելու և կանոնաւոր արձանագրութիւններ բռնելու, գիշերօթիկ վարժարան բանալու համար, բողոքուած է 1881 սեպտ։ 15-ին երջանկայիշատակին Ներսէս Պատրիարք Հօր, այդ թղթոց պատճէն կարելի է գտնել Պատրիարքարանիդ հանրագրոց մէջ, շուրջ 3000 ստորագրեալ, այս առթիւ յատկապէս մեր վանհայր ուխտած և խոստմնագիր անդամ տուած է մեզ որ առ վիճակն իւր վերադարձին իրացնէ ժողովրդեան բաղձանքն, սակայն նախորդէն աւելի վատթարագոյն կացութեան մը վիճակեցանք։

Վանուց տեսութեան համեմատ քաղաքիս ազգայնոց բարոյական վիճակն ալ խանգարեալ է։ Սահմանադրութիւնն անուանական կերպով կը գործադրուի, կարգեալ ժողովներն չունին ոչ օրինաւոր նիստ և ոչ արձանագրութիւն։

Բողոքականք և ճիզուիթք հարկաւ մեծ օգուտ կը քաղեն և պիտի քաղեն այս բարեպատեհ առիթներէն։ ազգին ապագայ յոյսն՝ պատանեկութիւնը՝ այլակրօն ճիրանաց մատնուած է։

Ահա, Բարձրաշնորհ Տէր, որչափ կարելի է համառօտիւ ջանացինք առաջի առնել Ձերդ ԲարձրՍ բրանչութեան զողբալի կացութիւն իրաց և իրողութեանց որ ի վիճակիս, երբեմն այնքան փառաւոր, այնքան օրինակելի։ Արդ խոնարհարար հայցելով զարժանին գործադրութիւնն վերջ կ'ուտամք ներկայիս։

ՄԱՆՈՒԷԼ ՄՕԶԵԱՆ
Մէաբան Ս։ Նշանի Սեբաստիոյ

ԱԿՆԱՅ ՎԱՐԺԱՐԱՆՔ

Կ։ ՊՈԼԻՍ, 23 յունուար

Ակնէն առնուած վերջին տեղեկութիւններ կարի տխուր գոյներով կը նկարագրեն տեղւոյն ազգային վարժարանաց նիւթական վիճակն։ Հոգաբարձութիւնն 88 տարւոյ ելեւմուտքին մէջ ունեցած 6-7000 ղրշի բացն ուրիշ կերպով փակելու յուսահատած, դիմած է տեղւոյս պանդուխտ պատուաւոր Ակնեցիներու, խնդրելով որ կա՛մ թատերական ներկայացում մը տալով և կա՛մ ուրիշ միջոցաւ ձեռնտուութիւն մը ընելով, այդ գումարն հայթայթեն։ Քաղաքին վարժարաններն չեն այն կանոնաւոր և բարեկարգ վիճակին մէջ, յորում կը գտնուէին ակէ 5-6 տարի առաջ, շնորհիւ երամ էֆէնտի ձէնաղեանի անխոնջ ջանից և գնահատելի գործունէութեան։

Ի լրոյ կ'իմանամք թէ մայրաքաղաքս գտնուող Ակնեցիք յառաջիկայ շաբթու ժողով մը ընելով, ներկայ տարւոյ վարժարանաց բացը գոցելու միջոցներուն վրայ պիտի խորհրդակցին։

Այս առթիւ կուգամ առաջարկ մը ներկայացնել։ Իրաց այս վիճակին մէջ երբ վարժարանք չեն կարող իրենց մուտքը ծախուց հաւասարեցուցնել, բնական է որ այս տխուր եղելութիւնն յառաջիկայ տարւոյն մէջ ևս կրկնուի, և քանի որ վարժարանաց ներկայ վիճակին մէջ ծախուց խնայողութիւն ընել չէ կարելի, անկարելի է նաև բարենորոգում ներմուծել, որում այնչափ պէտք ունինք։ Ուստի ներկայ տարւոյ նիւթական պակասն հոգալու և ապագային մէջ՝ այդպիսի գժուարին կացութիւններէ ազատելու ու վարժարանաց միշտ օգնութեան ձեռք կարկառելու նպատակաւ կ'առաջարկեմ որ ասա գտնուող պանդուխտ Ակնեցիք միանալով, իրենց մէջ միայուն ընկերութիւն մը հաստատեն, որ հոս ունենայ Մասնաճիւղ մը, իսկ կեդրոնն ըլլայ յԱկն, եւ տարուէ տարի որոշեալ գումարով մը նպաստեն վարժարանաց։

Թերեւս առ այս առարկուի թէ յանցելումն քանի մը փորձեր եղած և ապարդիւն մնացած են, սակայն կարծեմ ամենքն ալ ղգան թէ վարժարանաց ներկայ տարտամ և անորոշ կացութիւնն անցելոյն հետ բաղդատելի չէ, և եթէ ընդ փոյթ օգնութեան միջոցներ ձեռք չառնուին, հետեւանքն համայն Ակնեցւոյն համար վնասաբեր և ամօ՞թալի պիտի ըլլայ։

ԱՒԵՏԻՍ Մ։ ԵԱՐԻՇԱՆԵԱՆ

ԱՌՈՂՋԱԲԱՆԱԿԱՆ

ՄԱՐՄՆԱՄԱՐԶՈՒԹԻՒՆ

Մարդս ինչպէս որ իւր մնային կարողութիւնն ուսմամբ զարգացնելու՝ նոյնպէս ալ ֆիզիկական կարողութիւնը մարմնամարզութեամբ աճեցնելու եւ զօրացնելու պարտաւոր է։ Եւրոպայի բոլոր երկրորդական և բարձրագոյն վարժարանաց մէջ գիտութեան պէս մարմնամարզութիւնն ալ հաւասարապէս կ'ուսանուի ուսանողաց։

Երբ նաւավարներուն և երկաթգործներուն վրայ ակնարկ մը նետենք, կը տեսնենք որ անոնց ձեռքերն ու բազուկները խոշոր և զօրաւոր են, ասոր պատճառը նոցա ձեռքերը միշտ շարժման մէջ ըլլալն է։ Հետեւաբար մարմնոյն բոլոր մասերն եթէ շարժման մէջ գտնուին՝ կ'աճին և կը զօրանան։ Ահա այս համոզմամբ մարմնամարզութիւն կոչուած շարժումը մարդուս մարմնոյն ոյժ և զօրութիւն տալու համար հաստատուած է։

Մարմնամարզութենէ հետեւեալ փոփոխութիւնը յառաջ կուգան։

1։ Արեան շրջանն արագութիւն ստանալով ամենայն դիւրութեամբ և կանոնաւորութեամբ իր պարտքը կը կատարէ։

2։ Շարժման միջոցին շնչառութեամբ ներքին կիզումն աւելնալով հիւսք կը նորոգին։ Այս երկու ազդեցութենէն մնային կարողութիւնը նոր փայլ մը կ'ստանայ, ախորժակը կը բացուի, մարսողութիւնը կը դիւրանայ, մկանունք պէտք եղածին պէս կը սնանին ու կը զօրանան և մարդս ուրախ զուարթ վիճակ մը կունենայ։

Սոյն օգուտներէ զատ կատարուած անդամն համեմատ իւր տեղական օգուտն ունի, զոր օրինակ, երբ մէկը դաւաղան մը երկու ծայրէն բռնելով գլխուն վրայէն ետեւը անցուցնէ, ասկից միանունք և կուրծքին յօդուածք կ'երկարին և կը տեսնեմք որ կուրծքին լայնութիւնը 4-5 սանթիմէթր մեծցած է։ Եթէ այս շարժումը քանի մ'անգամ շարունակուի՝ ի սկզբանէ առժամանակեայ եղող այդ ընդլայնումը մշանջենաւոր կ'ըլլայ, որով կուրծքն և սորա հետ ի միասին թոքերը կ'ընդլայնին։

Մարմնամարզութիւնը կերակուրէն 2 ժամ վերջը կատարելու է, վասնզի եթէ ասկից առաջ ըլլայ մարսողական գործողութիւնը տակաւին չաւարտած ըլլալուն կը վնասուի, ուսկից մարսողական դժուարութիւն, խանգարում, գլխի ցաւ և այլ չղջային հիւանդութիւններ յառաջ կրնան գալ։ Այս կերպով փոխանակ օգտի վնաս կ'արտադրէ։ Շարժման մէջ ամենէն առաջ ձեռքերը վարժեցնելու և զանոնք զօրացնելու է, զի դրեթէ բոլոր շարժմանց մէջ ձեռքերն են որք մարմինը կը բեռնաւորեն։

Մարմնամարզութեան չափազանցութիւնը արեան շրջանին չափէն աւելի արագութիւն պատճառելուն ներքին թիւնը աւելի բարձրացնելուն և մտքոյն մէջ եղած իւղը փճացնելուն նիհարութիւն պատճառելով այլ և այլ հիւանդութիւններ յառաջ կը բերէ։ Շարժմանց ձեւը և չափը տարիքի, սեռի և կազմութեան համեմատ փոփոխական է։

Մինչև 12 տարեկան՝ գրեթէ մանկոյն ոսկորները կռճիկ վիճակէն ելլելով կը կարծրանան և միանունք ու յօդուածք ալ իրենց պէտք եղած զօրութիւնը կը ստանան։ Այս պատճառաւ 12 տարեկանէն վերջը մարմնամարզութեան ընկնելու է։ Եթէ այդ ժամանակէն յառաջ ըլլայ՝ մարմնոյ սոյն հատակին վիճակը այլ և այլ շարժմանց զօրութեանց դիմադրելու անկարող լինելուն շատ վնասներ կը ծագին։ Նոյնպէս մարմնամարզական շարժումներէ սատակցող սրտի հիւանդութեանց և այլնի ենթակայ անձինք հեռի մնալու են մարմնամարզութենէ։

Վարժարանաց մէջ մարմնամարզութեան հմուտ դասատու մը՝ աշակերտին աւելի շարժման պէտք ունեցած անդամը լաւ հասկնալով զանի այն կարգի շարժմանց մղելու է։ Նաև բոլոր աշակերտաց ֆիզիկական կարողութիւնը ի նկատ առնելով սոնոր համեմատ շարժումներ որոշելու և իրենց կարողութենէ վեր շարժմանց ենթարկելէ զգուշանալու է, այս կերպով է որ վարժարանաց մէջ փոքր, միջակ և մեծ աղաքները իրարմէ զատելով իւրաքանչիւրին տրուած դասերը իրենց կարողութեան համեմատ կ'ըլլան։

Սեռի տարբերութեան գալով՝ յայտնի է թէ արական սեռն իգականէն աւելի իւր ժամանակին մեծ մասը տունէն դուրս կ'անցուցնէ։ հետեւաբար իրենց գնացած տեղերը մաքուր օդ ընչելով իրենց գործին ու արհեստին բերմամբ այլ և այլ շարժմանց մէջ կը գտնուին։ Այս պատճառաւ երբեմն իրենց տանց մէջ գտնուող խնաւութեան, ապականեալ օդի և լոյսի պակասութեան պէս առողջաբանական օրինաց հակառակ ազդեցութեանց կրնան դիմադրել։ Սակայն իգական սեռն ընդհակառակն միշտ տան մէջ նստելով ժամանակ կ'անցուցնէ ու իրենց տանց մէջ գտնուին հաւանական եղող վերոյիշեալ թերութեանց չկրնար դիմադրել, որով արեան նուազութեան և ուժաթափութեան աւելի ենթակայ ըլլալով կը տկարանան։ Ահա այս տարբերութեամբ իգական սեռն արականէն աւելի մարմնամարզութեան պէտք ունի։ Բայց կան շարժումներ՝ զորս եթէ իգական սեռն ընելու ըլլայ անպատեհութիւնք յառաջ կրնան գալ։ Այս տեսակ շարժումներէ իգական սեռն զգուշանալու է։

Ս։ Թ։

88 դեկտ։ 22
Կ։ Պոլիս

ԱԶԴ

Ֆրանքօ-Հունգարական անանուն ապահովագրական ընկերութեան, որ ի Պուտապէշտ, 1889 յուն։ 31-ին վիճակահանութենէն շահող թուատոմսերը, մէն մի թիւ 2500 Ֆրանք։

Ռիւ- նոմերն	Ռիւ- պորտ- հորհակի	
809	10583	Զապատքա
1728	439	Հէլսինֆ
2999	4744	Թորտա
6411	16876	Ցէկէտ
6533	17330	Ս։Ա։ Իւժէլի
7258	19746	Պէշկրատ
7507	22208	Բլատնօ
7863	21690	Վիէննա
8457	23380	Կ։ Պոլիս
9442	26402	Մինշա
9580	26847	Զէրվենքա
9857	27882	Սիքլոս
10320	29551	Վիէննա
10702	31019	Փարիզ
11214	32254	Թէնքէ
11483	33123	Կանա
12562	4515	Պիւտապէշթ
13522	18275	Վիէննա
13705	7660	»
747	27788	Սրարթա
759	27806	Պիւտապէշթ
1786	16362	Լիթթաու
2240	17992	Պիւտապէշթ
3988	19648	»
3998	19663	Դոռպէթ
5852	23877	Հալէպ
7759	8014	Մ։ Օվառ
7927	25828	Թիւսքէ
10360	762	Լոսոնտ
11325	1796	Սիւմկ
11544	4998	Բարուվարլ
11704	7888	Ռ։ Զոմպաթ
12237	31063	Կիսրոք
12315	31434	Պէշկրատ
12383	31693	»
20112	7835	Բէշոյնիկհայան
20385	9005	Զիկաղտ
23040	13240	Բուտոլֆհայմ
23050	25865	—

Վերոյիշեալ թիւերէն 8457, 747 եւ 5852 թիւերն ինչպէս որ կը տեսնուի առաջինը Կ։ Պոլսոյ մէջ Պ։ Էօժէն Ռարարբ, երկրորդն Սբարթայի մէջ Նիքլաս էֆ։ Շէրվիչատին օղլու և երրորդն Հալէպի մէջ Յովհաննէս էֆ։ Դոգորեան չահած լինելով, Ֆրանքօ Հունգարական ընկերութիւնը նոյն ժամայն մատուցած է յիշեալ անձանց մէն միոյն 100 անգղիական ոսկի, այսինքն 2500 Ֆրանք։

Տնօրէն — Ընդհանուր քարտ.
Է։ ԲԱԲԲԱԲՈՐ — Ն։ ԵԱԶՃԵՆԵԱՆ
Կ։ Պոլիս 7 փետրուար 1889

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԳՐԱՊԱՐԱՆԻ
ԲԱՌԱՐԱՆ
ԳՐԱՊԱՐԱՆԻ ԲԱՑԱՐԱՆ
ԳՐԱՊԱՐԱՆԻ ԳՐԱՏՈՒՆ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԳՐՊԱՐԱՆԻ
ՀԻՄՆԱՐԿԵԱԼ Գ։ ՊՈՂՈՍՅԱՆԻ
ԳՐԱՊԱՐԱՆԻ ՏԱՍՆԵՐՈՒՄ Գ։ ՊՈՂՈՍՅԱՆԻ
ԲԱՌԱՐԱՆ
ԳՐԱՊԱՐԱՆԻ ՏԱՍՆԵՐՈՒՄ
ԳՐԱՊԱՐԱՆԻ ԳՐԱՏՈՒՆ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԳՐՊԱՐԱՆԻ
ՀԻՄՆԱՐԿԵԱԼ Գ։ ՊՈՂՈՍՅԱՆԻ
25,000

Սոյն Ցառանաշայ Գրպանի Բառարանս հակառակ իւր փոքր ծաւալին ու համեստ գնոյն կը պարունակէ գրեթէ մեծ բառագրոց չափ բառ և ոճ։ Անձուկ մտքոյն մէջ տեղնուն յաջողած է յաճախ եռատեղի աշխարհաբար բառերուն եւ ոճերուն քով դրաբար համանիշներն ալ, որք անհրաժեշտ են մատենագրական զարգացք թարգմանիչներուն։ Ի հարկին բառերուն տառիերիներն ալ գրուած են, որպէս և անկանոն արտասանութիւնք։ Սոյն նիւթական ու բարոյական առաւելութիւնքերն զատ կարեւոր թերի մ'ալ կը լնու Գրպանի Բառագիրքս, որուն կցուած է պատմական, աշխարհագրական ու գիւղական անուանց բառտան մը։ Բառագիտութիւն վերագրեալ հատուած մ'ալ՝ սը համառօտիւ կ'ուսանուին բառակազմութեան կանոնք՝ եզական գործ մը կը կազմեցնեն Գրպանի Ցառանաշայ Բառագիրքը։ 141

Գինն է միայն 12 դահ. Անգլ։ լսթակազմ

ԱԶԴ

Մասնաւոր խարանեալ զաւեշտաթերթի արտօնատէր Գէորգ էֆէնտի Այվազեան՝ Մխիթարեան ընտիր ձիթաւոր և օճառ, թէնէքտուն պատուական գինի և Իզմիրէն ընտիր օղի բերել տուած է, և ամն գնով կը վաճառէ Ղալաթիա Բէնչէնպիկ-պազար Իփսի խան։ Ասոնցմէ զատ, յատկապէս բերել տուած է կիպարոսի պատուական գումնտարիան, Եւրոպայէն ծորմ Սալամն եղարաց ընտիր գունեաքները թէ՛ չիլերով և թէ՛ տակառով, և Սկիւտարի ընտիր Զավուշ-իւզիւմիէն ճերմակ գինի։ Նաեւ ամենաընտիր ձիթապտուղ։ Ցանախորդք մեծապէս գոհ կը լինին ասոնց թէ՛ շէպպիւս օլունմաղը Ցէրսատէթ իւսմաթ։ Նիզամկիզ իճրա տարէքսինտէն իլան օլունուր։

24 Քեանունի սանի 304 323

ԻԼԱՆ

ՊԱՊՐ ՍԷՐԱՍԿԷՐԻ

Ցէպազիսանէ իչուն միւպայեա օլունմաղը իւշ պին ատատ եէրլի քէսինտիսի թուղը քուրու բուսէլի կէօնինին պէկէր գըյէլի ճէպիսի տօքուզ զուրուշա թալիպի էօհսէսինտէ օլուպ քեանունը սանինին օթուզընճը կիւնինէ գատար պէկէր կիւն միւնագասսը իճրա օլունարաք մէգքիւր կիւնտէ գարարը գաթիսի վիրիլէճէկինտէն իթարնա վէ օթուզ պիրինճի կիւնի եիւզտէ պէշ թէնգիլինէ թալիպ օլանլարին մնգամը սէրասկէրի լէվազիմաթ տայիրէսինէ կէլմէլէրի իլան օլունուր։

23 քեանունի սանի 1889 116
Նօ։ 13 2—3

ԻԼԱՆ

ՊԱՊՐ ՍԷՐԱՍԿԷՐԻ

Պիրինճի օրուայի հիւմայուն գալէվրպհանէսի իչուն մնհալինտէ թէսլիմ օլունմաղ իւզրէ միւպայեա օլունաճագ պին իքի եիւզ գըյէ սարը թէլին պէհէր աթիզ գըյէսի օն սէքիզ զուրուշա թալիպի էօհսէսինտէ օլուպ քեանունը սանինին օթուզընճը կիւնինէ գատար պէհէր կիւն միւնագասսը իճրա օլունարաք մէգքիւր կիւնտէ գարարը գաթիսի վիրիլէճէկինտէն իթարնա մէգքիւր սէրասքէրի լէվազիմաթ տայիրէսինէ կէլմէլէրի իլան օլունուր։

23 քեանունի սանի 1889 118
Նօ։ 15 1—3

ԻԼԱՆ

ՊԱՊՐ ՍԷՐԱՍԿԷՐԻ

Եօրտամ ազա զէվճէսի Անասթաշիա գաղտնի էքսէրճի Գօղմայա Տէրսատէթ պիտայէթ մահաքէմէսի պիրինճի հուգուք տարէսինտէն իթա գըլընան 20 թէմուզ 304 թարիխը վէ եիւզ էլլի եէտի նումէրօը պիր գրթա իլամ մուճիպլինճէ մահքիմանպիկ տէյի պուլունան մէպալիդին թէմիզը իսթիֆասը իչուն մէզուրէրնին Սարը թիմուր մահալլէսինտէ Աւազմա գաբու ճատտէսի խարիճինտէ էչօրլիք խակէլէսինտէ վագը թախմինէն եիւզ էլլի ի՛չ պուչուգ արշուն իւզէրինէ մէպին պէշ նումէրօը մէ՛ եիւզ եիրմի սէհիմ իթիպարը պիր քէրասթէճի տիւքքանը կէտիկինտէ միւթէսարրըֆա օլուուը գըրգ սէհիմ կէտիքաէն տէյինէ քէֆիպէթի ճիհէթէլէ եիրմի սէհիմին թարիխը իլանտէն իթիպարէն օն պէշ կիւն սօնրա պիլմիւզտէէտ ֆիրուսթրնա թէչէպպիւս օլունմաղը Տէրսատէթ իւսմաթ։ Նիզամկիզ իճրա տարէքսինտէն իլան օլունուր։

24 Քեանունի սանի 304 323

ԻԼԱՆ

ՊԱՊՐ ՍԷՐԱՍԿԷՐԻ

Թահնիէ իսարէսի հասրլաթիտան սամիրլաճաք իւշ եիւզ էլլի պին քըյէյի ճէպիսա ինճէ քէբէյին էչթիրասնա թալիպ օլանլէրին իչ պու քեանունի սանիյի բուսմինին եիւրմի սէքիզինճի ճիւմա իրթէսի կիւնիւնէ գատար մաքամի սէրասքէրի լէվազիմաթ տայիրէսինէ կէլմէլէրի իլան օլունուր։

23 քեանունի սանի 1889 117
Նօ։ 14 2—3

Արտօնատէր Ս։ ՏԱՄԱՏԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՑ

ՄԵԾ ՍՊԵՐԱՆՈՑ Ս։ ԵՏԱՔՍԵՂԻՆԱՅ
ԲԱԲԲԱՏՈՒՐՈՒԼՕ ԵՂԲԱՐՔ
Մեծ Շուկայ Պոլսոյ, Բէպպէճը խան Թիւ 3 եւ 4, Քալաքճիլար Պազը Թիւ 31 եւ 33, եւ Սանտալ Պէզէսթէնի մօտ Թիւ 34
ՄԵԾԱԳԱՆԱԿ ԵՒ ՓՈՔՐԱԳԱՆԱԿ ՎԱՃԱՌՈՒՄՆ
Բաբատուրլօ եղբարք պատիւ ունին ծանուցանել ազգոյ հասարակութեան և իրենց բարեմիտ յաճախորդաց թէ վերջերս ուղղակի ստացած են բոլորովին նպատակաւոր և արտակարգ պայմաններով մեծատարածութենով ճոխ և բազմազան հաւաքածոյ մը, լիակատար ապրանքով և տարբերակներով եղած, ինչպէս եւ Խարիպի ամէն տեսակ նորոյներ։ ԱՄԵՆԱԶԳԻ ԹԱՒԻՇՆԵՒ, ՍԻՒՐԱՀ, ՄԱՀՈՒԹՈՒ, ՍԷՐԷՆ ԼԻՒՔՈՒՈՐ, ՖԱՅԼ ՖԻՆԱՆՍԷ։ ու զանազան տեսակ կեպանոնք պատրաստելու վարպետներու համար։
Ամենք որպէս իրենց այդ երեսեմամբ պատուեն այս կասեւոր հաստատութիւնը, բոլորովին գոհ պիտի մնան Է՛ յիշեալ ապրանքներ ընտրել ազգին տեսակէն եւ թէ ժամանակէն, որովհետեւ, այս վաճառատան մեծ վաճառումը կը շատանայ ազգար եւ խրդհամիտ շահով մը, ինչպէս ապացոյցը դիւրին է տեսնել։ 261

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

96

ՆՈՐԹՀՐԸՆ ԷՇՈՒՐԸ ԵՍ

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ Անգլ. Ոսկի 3,000,000. ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄ 6,243,127
ՀԱՍՈՅԹ 1887 ՏԱՐԻՈՅ 1,932,350

ՆՈՐԹՀՐԸՆ ԷՇՈՒՐԸ ԵՍ

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ Անգլ. Ոսկի 3,000,000. ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄ 3,421,200
ՀԱՍՈՅԹ 1887 ՏԱՐԻՈՅ 946,800

Ընկերութիւնքս Պոլսոյ մէջ ունեցած Միայնակալ Գործակալութեան միջոցաւ հրդեհի դէմ ամէն կարգի վտանգաւոր ապահովագրութիւններ ի գործ կը դնեն չափաւոր գնով, և իրենց ցոյց տուած գլուխական երաշխաւորութեամբ մեծ գումարներ ապահովագրողաց կրնան վստահաբար վիրենք ներկայացնել։ Նաև իրը ապացոյց իրենց հաստատութեան, միայն հրդեհի ճիւղին համար մինչեւ յարդ տուժած գումարին 15,000,000 Անգլիական Ոսկին կ'անցնի։

ԾՈՎԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ԴՐԱՄԱԳԼԻՒՈՒ Անգլ. Ոսկի, 500,000 — ՄԱՐԻՄԱՑՄ — ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄ Անգլ. Ոսկի 102,345

Ընկերութիւնս կ'ապահովագրէ շրգենաւուց և առագաստանաւուց մէջի ապրանքներն և դրամագրարներն խիստ օգտակար պայմանաւ։ Գնոց և այլոց վրայ տեղեկութիւն առնուլ ուզողք կը հրաւիրուին դիմել Ղալաթիա Գումիսիոն խանի անկիւնն երկաթէ կամրջին վրայ նայող սենեակն, առ ԳԱՌՆԻԿ Յ. ՍԵՐՈԲԵԱՆ Գործակալ Կ. Պոլսոյ Վերոյիշեալ երեք Ընկերութեանց

La Compagnie d'Assurences La Mannheim
ET
La Compagnie de Ré-Assurances de Mannheim

Ի ՄԱՆՀԱՅՄ

ԸՆԴԴԵՄ ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՃԱՆԳԱՑ

Ամբողջ դրամագլուխ 12,500,000 ֆրանք
Պահեստի » 2,825,000 ֆրանք

Կ'ապահովագրուին գրամ, թանկագին սեռաղ, արժէթուղթ, գոհարեղէն և այլ պարագանող ծրարներ, որք յանձնուած են ամենազգի թղթատարական վարչութեանց կամ փոխադրութեան ընկերութեանց։

Վերոյիշեալ ապահովագրութիւնք կը կատարուին La Mannheim Cº d'Assurances et la Cie de Ré-Assurances de Mannheim ընկերութեանց կողմէ որք ի միասին ունին 30,500,000 ֆրանք։

Կ'ապահովագրուին շրգենաւով, երկաթուղով առագաստանաւով փոխադրուած ապրանքներ։

Գինները շատ չափաւոր են և պայմանները շատ ազատ։

Աւելի ընդարձակ տեղեկութեանց համար դիմել առ

Տ. ԼԸՊԷ ԵՒ Վ. ԻԳԴՈՐ ՈՐԴԻ
Ընդհանուր Գործակատար է Կ. Պոլսոյ Սուլթան Համամ Երկրորդ Ընկերութիւն

221

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.

ԸՆԴԴԵՄ ՀՐԴԵՀԻ
THE MUTUAL ACCIDENT ASSOCIATION LIMITED
ԱՐԿԱԾԻ ՀԱՄԱՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Երաշխաւորելու դրամագլուխ 100000 անգլ. ոսկի ամբողջ. ստորագրուած

ՍՈՎՈՐԱԿԱՆ ՄՈՒՐՀԱԿՔ

Տարեկան 4 ոսկւոյ գրամի մը կ'ապահովէ 1000 ոսկի, Մահուան կամ Մշտական և բացարձակ անկարողութեան պարագայի մէջ։
333 ոսկի, Մշտական և մասնական անկարողութեան պարագայի մէջ։
Շաբաթական 6 ոսկի, առաջնակարգ անկարողութեան պարագայի մէջ, թէ ամբողջական և թէ մասնական։

GLASGOW & LONDON ԿԱՌԱՎԱՐՈՒ ԵՆՏ ԼԸՆՏՐՆ

Դրամագլուխ 300,000 Անգլիական ոսկի

Թուրքիոյ համար ընդհանուր գործակալ ՀՈՖՄԱՆ ԵՂԲԱՐՔ ԵՒ ԸՆԿ.
(171) Պոլիս, Սուլթան Համամ, Սայտիէ խան, թիւ 13, 14, 15

ՖՐԱՆՔՈ-ՀՈՆԿՐՈՒԱԶ

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԻՊԻՏԱԲԷՍՔ

ՀԱՆԴԵՐՁ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԵԱՄԲ

Արտօնեալ դրամագլուխ 20,000,000
Գանձեալ » 10,000,000
Մահուան արկածից դէմ պահեստի 12,000,000

Արեւելից Տնօրէն. Մ. Լեժէն Բարարոր
» լիազօր գործակալ և քննիչ. Մ. Նազարէթ Եազըճեան

ԹՈՒՐՔԻՈՅ ԳԼԽԱՒՈՐ ԳԱՂԱՓԱՑԻ ԳՈՐԾԱԿԱԼՔ

Տեարք Պալեօղեան և Պալըքճեան Զմիւռնիա. Գասպարեան և Տամիրճիպաշեան Ատանա. Դ. և Մ. Սեթեան Հալէպ. Բ. Շերէֆիէտտին և Տէրունեան Ատալիա և Սպարթա. Սիմէօն Տէյիրմէնճի օղլու Քօնիա, և այն։

Ֆրանքո-Հունգարական կենաց անանուն ընկերութիւնը խիստ գիւրամատչելի պայմաններով մահուան դէմ ապահովութիւններ կընդունի, նոյնպէս փոքր աղայոց և աղջկանց ի չափահասութեան վճարելի պայմանաւ։

Աւելորդ կը համարինք ցուցել թէ ամէն ընտանեաց և զուտակաց տէր անձանց իբր նուիրական պարտականութիւն մէկ տարեկան փոքրիկ զոհողութեամբ մը իւր կեանքն և իւր զուտակաց տարազան ապահովել։ Կամ ի թերութեան օրերու և կամ յետ մահու իւր սիրելի կինն և զաւակները, աղքատութեան սոսկալի ճիրաններէն հեռի պահելու համար ուստի արգոյ հասարակութեան լուրջ ուշադրութիւնը կը հրաւիրեմք Ֆրանքո-Հունգարական ընկերութեան չահաւէտ պայմանագրաց և վճարահանութեան մասնաւոր տեսակներուն որ մէն մի տարի Պոլսոյ մէջ ի ներկայութեան կայսերական պաշտօնէից տեղի կունենան, մէն մի շահող թիւ 100 անգլիական ոսկի շահելու պայմանաւ։

Աւելի ընդարձակ և կարեւոր տեղեկութիւններ ստանալու համար դիմել առ վարչութիւն։ Ամէն լեզուէ յայտարարութիւնք ձրի կը տրուին։

Գոհութեամբ կը ծանուցանեմք յարգոյ հասարակութեան թէ, ընկերութեան 1885 յունվար 1էն մինչ 1886 տարւոյն յունվար 1ի ընդհանուր գործողութեանց հաշուեցուցակին, (Լոնդրայեալ Աստրէոյ-Հունգարական կառավարութիւն ներքին գործոց նախարարութիւնէն) պահեստի գումարին վրայ 2 միլիոն ֆրանգի պատկառելի գումարի մը յաւելում գոյացած է, որով անցեալ տարւոյն 10 միլիոն պահեստի գումարը ներկային 12 միլիոն է։ 286

ԴԵՂ ՋԵՐՄԻ ԵՒ ՑԵՆԴԻՑ

Տարթոր Այէրի ջերմային հիւանդութեանց այս դեղն որ անխառն բաղադրութիւն մի է զուտ բուսեղինաց, է դառնահամ և ապրում կապզուրիչ ամէն տեսակ ֆիզիկական խանգարմանց, որ յառաջ կուգան ճանապարհաւոր ցաւերու ջերմամ կիմայից, վատ ու ապականալ օդերէն, որուն օգտակարութիւնը և ապաքինիչ ազդեցութիւնը երաշխաւորեալ է նորա անհամար արդեանցը ստոյգ գիտութեամբն։ Այս ֆիզիկական խանգարումներն յառաջ կուգան օդին մէջ լողացող թունաւոր անչմարելի նիւթոց միջոցաւ, որք թոքերէն անցնելով կը մտնեն արեան մէջ, կը խանգարեն լեարդը, և յառաջ կը բերեն տեսակ տեսակ ջերմեր և տենդեր, և արեան թունաւորում, որոց աս անունները տրուած է։ ջերմն և սարսուռ, թաղուն ջերմ, պարբերական ջերմն, ընդհատեալ ջերմն, մաղձային տենդ և հրատապ տենդեր։

Թունաւորեալ օդերէ պատճառեալ հիւանդութիւնք կը պատահին այն տեղեր ուր մթնոլորտը ապականեալ և թունաւորեալ է ճահիճներէ կամ ճանճանուտ վայրերէ բուրեալ ժահահոտ նիւթերով, կամ բաց աղբանոցներէ և ականներու ծակոտիներէն ելած թունաւոր կաղբերով, զորս մարդիկ կը ծծեն շնչառութեամբ։

Այէրի ջերմի ու տենդից դեղն կը ջնջէ այդ թունաւոր նիւթոց կամ կաղբերու ազդեցութիւնը և դուրս կը վռնէ զայն մարմնոյն մէջէն, որպ գործածութիւնն ստուգապէս անվտանգ և անվնաս է և օգուտն ստոյգ, միայն թէ որուած հրահանգից համեմատ գործածուի։ Կը ծախսուի Միացեալներ և ընկերաց Ամերիկեան վաճառատան մէջ ի Ղալաթիա Կոստանդնուպոլսոյ։ 166

ՍՏԱՄԲՈՒԼԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆԸ
ԴԻՈՒՐԱԱՐՈՒԹԻՒՆ

Սիրտի զարկաստութիւն, ստամբսի ցաւ կը բուժի Բարերգեան փոշիներով և բաղադրներով

POUDRES & PASTILLES
BARBERSON

Պիվմիւթով եւ մանեէ գիով

ՏէրԱՆ, դեղատոր ի Բարիզ, Պոնեն փողոց, 23, և ամէն դեղատուներ մէջ։

ՎԵՆՆԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ՀԱՇՈՒԱԿԱՆ ԵՒ ՄԱՐՈՒԹԵԱՆ
Ն. ԻՆՔԻ ԵՒ ԸՆԿ.

Մարդիկ և Ռոնեան ՀՅԼ կանանաբաղ. ջրոց

Սատան, Տրաղ, գոն և Պաթուտ երեսաւոր յատաջիկայ չոգենաւն է Ռնոբլի որ փետրուար 6ին Մարսիլիայէն և փետրուար 13ին Կ. Պոլսէն պիտի մեկնի։

Մարսիլիա երթալիք յատաջիկայ չոգենաւն է Սիդիէլի որ պիտի մեկնի փետր. 18ին։

Բացարձակ և օրաբ ուսիարարութիւն

Նաւագնացի, ուղղ որութեան և այլ տեղեկութեանց համար

Դիմել առ գործակատար
ԹԻԵՆՈՒԹԻ ԲՐՈՊՐԷԼ
Թիւ 17-18 Գիւբիւք Մէլէթ
Մահմանէ փողոց, Թիւ 14
1606

ՀԱՋԻ, ՇՆՉԱՐԳԵԼՈՒԹԵԱՆ, ՊՐՈՆՇԻԴԻ, ՀԱՐԲՈՒԽԻ, ՅՐՏՈՒՈՒԹԻՒՆ ԱՆ ԵՒ ԶԱՑՆԻ ԿՈՐԿԵՐՄԱՆ ՀԱՄԱՐ

ՇՆՉ ԼԱՊՈՂԻ ԵՒ ԽՌՉԱՓՈՂԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆՑ գէմ իբր ապահով գարման այս դեղին վայելած համբաւը միշտ կը հաստատուի այն բազմութիւն նամակներով զորս Պ. Բուռէլ կ'ստանայ անոնցմէ որք գործածած և ճանչցած են նորա յատկութիւնները։

«Ազգիոյ Թագաւորական Նկեղեցի Թեմական Թիւրդարանէն վրայ, ի Ռուբ. Սկոտիա.

«Սիրելի պարոն. Ըստ որում կը նշուուի յանձնարարեց ինձ գործածել ձեր անգուգական բալասանն անիսանի հատիկներով և կրնամ հաստատել ձեզ թէ առաջին գործածութենէն իսկ զգալի բարւոքում կրեցի, առանց իսկ պէտք ունենալու գործերս դադրեցնելու, և առաջին փորը որուակը բոլորովին բուժեց զիս։ Ուստի անոր ազդեցութեան վրայ ունեցած մեծ վստահութեամբս կը յանձնարարեմ զայն պարոյ.

(Ստր.) Վ. ԼԻՆԶԼԻ, Նեկեղի Թեմական Գործակալ։

Կը վաճառուի ամէն դեղատանց և արտօնեալ դեղերու վաճառականաց քով։ Հերը 1 շիլին 1½ բէնսի, 2 շիլին 3 բէնսի և 11 շիլինի։—Պատրաստեալ ձեռամբ ԹՈՄԱՍ ԲՕՈՒԷԼԼ, 4, Ալկոռն Բաղէյս, Պլաքֆրիարս Բրտ, Լոնտոն։

Մեծաքանակ և փոքրաքանակ կը վաճառուի Թուրքիոյ և Պոլսոյ հարիւր ներկայացուցչին քով

76 Մ. ԷՄՈՒՆՏ ԳԱՌՈՒԱՆ
Անգլիական Ընդհանուր Մթերանոց, Վ. Ոյվնատ, պահանոցին քով, կայսրան Թրամուէյից, 95 և 97

ՐՈՊԷՆՍՈՆ

ՏԱՐՕՐԻՆԱԿ ԱՃԱՆՈՒԹԻՒՆ
ՄԵԾ ՄԹԵՐԱՆՈՑ ԲՈՒԼՃԻ ԵՒ ԷՖԹԻՄԵԱԴԻՍ
Ի Պոլիս Սուլթան Համամ Աշը Էֆէնտի խանը թիւ 15 և 17
Կը վաճառուի մեծ և փոքր քանակութեամբ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԼԻԲԻՏԱՍԻՈՆ

Այս վաղեմի և հռչակաւոր մթերանոցին մէջ տարօրինակ ածանութեամբ կը վաճառուին Եւրոպայի զանազան քաղաքներէն վերջին նորաձեւութեանց համաձայն բերուած արանց և կանանց յատուկ ամէն տեսակ ճերմակեղէնք հովանոցք, գաւազանք, կանանց յատուկ զգեստեղէնք և այլն։ Բաւական է անգամ մը այցելել ԲՈՊԷՆՍՈՆԻ մթերանոցը տեսնելու համար ապրանաց գեղեցկութիւնը, գեղեցկութիւնն և գներու այնպիսի ածանութիւն որ գործարանի գնոյն կը հաւասարի և չկրնար մրցող մը ունենալ։

Գիներն որոշուած են Օսմանեան ոսկին 108 դրուշի հաշուով։ 5



ԳՈԼԻԹԻՆԻ ԳԻՆԻՆ Հեշտահամ և կազդուրիչ ըմպելի մէ, բաղկացեալ Բորդոյի գինեէ, Լիէպիգի մսի Էնթէթ և Մալթի Էնթէթ, կամվելով այսպէս անուշանոյշ, զօրաւոր և զրգռիչ խառնուրդ մը, որ թէ առողջ և թէ անկար մարդոց համար լաւ է հաստատապէս։

Բժշկական հանձնաժողովն հաւանած է նմա և բազմաթիւ նշանաւոր բժիշկներէ յանձնարարեալ է։ ՀԱՅԱՐԻՆ ԱՒԵԼԻ ԲԻՒՇԿ դրած են իրենց վկայութիւններն։ Ասոնք կը թարգմանենք վկայութիւնն տարբեր

Թ. ԲԼԷՔԻՆԱԼՏ ՀՈՒԼԷՍԻԼ, Մ. Բ. Ս. Ս. Լ. Լ. Մ. Բ. Ս. Բ. Ճ. ԵՒ ԸՆԿ.

26, Լորն Բոտ և 24 Համիլդն Սգուէյր

Պրքլենիտ, 2 սեպտեմբեր 1888

Պարոնայք — Ի նկատ առնելով խարդախ մրցումն մը հանած զանազան լուսերը, կը փափաքիմ յայտնապէս գրուցել ձեզ թէ որչափ գոհ եմ ձեր Մալթի պատրաստութենէն։ Քանի քանի անգամներ տեսած եմ սաստ առողջաբար ազդեցութիւնն այն հիւանդութեանց վրայ որոց համար պատուիրած եմ գայն, և ինչ ինչ պարագայից մէջ ձեռք բերած եմ հրաշալի արդիւնքներ զորս պարզ գիտնին (առանց մուգի) չպիտի կրնար տալ։

Ընդունեցէք, և այլն և այլն

Թ. ԲԼԷՔԻՆԱԼՏ ՀՈՒԼԷՍ

Ի վերջոյ, մաքրաքաղաքիս գլխաւոր բժիշկը ջերմապէս յանձնարարած են զայն։

Հարցնել ԳՈԼԻԹԻՆԻ ԳԻՆԻՆ Լիէպիգի մսի և Մալթի խառնուրդով, զգուշանալ կեղծերէն։

Դիմեցէք սորագրիչին, միակ գործակալ ի Թուրքիա Դուիմնի և ընկերութեան գործարանին Ս. Ճոնա Նորուիչ և Լանտան։

ԷՄՈՒՆՏ ԳԱՌՈՒԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԹԵՐԱՆՈՑ ԱՆԳԼԻԱԿԱՆ, պահանոցին քով, կայսրան Ղալաթիա-Շեշլիի Թրամուէյից թիւ 95 և 97, Ղալաթիա 80

ՆՈՒՊԻԱԿԱՆ ՆԵՐԿ

Խիստ յարմար է ներկելու համար կոշիկներն որք առաջին անգամն կը փայլին, առանց խոզանակելու պէտք ունենալու։ Այս փայլն, որ նշանաւոր պայծառութիւն մ'ունի, ամբողջ շաբաթ մը կը տեւէ։ Կոշիկներն անթափանցելի կ'ընէ ջուրի և խոնաւութեան։ Տիրոջ կամ ուրիշ ապտեղութիւնները դիւրաւ կը վերցուին թրջած լաթով մը, առանց փոխելու ներկին փայլը կամ գոյնը։

Այս ներկը կը յարմարի արանց և կանանց ամէն տեսակ կոշիկներու։ Կարելի է գործածել զայն նորոգելու համար ճամբորդութեան կաղապտուածները։

Գործածման եղանակ. Ներկելի տուարպոյն խնամով սրբել, այնպէս որ հին ներկէն հետք չմնայ։ Ապա փայլուն հեղուկէն բանել, կամ՝ սպունգի կտորով մը կամ՝ վրձինով։ Թրջուած մակերեսն ոտքերն կը չորնայ։

Զգուշանալ կեղծերէն։

Ընդհանուր կեդրոնատեղին է ԷՄՈՒՆՏՆ ԳԱՌՈՒԱՆԱՆ, Անգլիական Ընդհանուր մթերանոց, Վ. Ոյվնատ, Պահանոցին քով, կայսրան Ղալաթիա-Շեշլիի Թրամուէյից, Թիւ 95 և 97, Ղալաթիա։ 78

ԿԱՐԴԱՑԷՔ ԵՒ ՑԻՇԵՑԷՔ

Եթէ կ'ուզէք ընտիր և լաւ տեսակէ ապրանքներ ունենալ, դիմեցէք ի վաճառատունն

ԷՏ. ԻՆՆ ԳԱՌՈՒԱՆԱՆ
(Հիմնեալ 1854ին)

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԼԱՒԱԳՈՅՆ ՄԹԵՐԱՆՈՅՑ ի մայրաքաղաքս, որ խիստ չափաւոր գներով առաջնակարգ ապրանքներ միայն կը վաճառէ։

Ամէն չարիս նոր ապրանքներ կ'ստացուին հոն, բնաբեր, ԲԷՅ, կորսէ, պոնէր, պոբէյմար, ֆորիկոր, ֆրիկ, ոֆիսէց ըմպելիք, հոգոսէա ինիրեր, դեսէր, ինկիսան պոբրաստրոմբոնոներ, պրոմենալ դեղեր, և այլն և այլն։

Պ. Գարուանա յանձն կ'առնու անմիջապէս գործարանատեղից ապարել և տրել տալ յանձնարարդի մը ուզած ան և էնիսի որ մժենանոցին մէջ չկանուիր։

Դիտեցէք հասցէն

ԷՏՄՈՒՆՏ ԳԱՌՈՒԱՆԱՆ
ԱՆԳԼԻԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԹԵՐԱՆՈՑ
95 և 97, Իւքսէք Գարտրրոն, Վ. Ոյվնատա, Կայսրան Թրամուէյից, Ղալաթիա-Շշլի, Ղալաթիա։ 251

ՍԳՈԴԻ ՕՇԱՐԱԿ

(EMULSION SCOTT)
ՄՈՐԻՒ ՁԿԱՆ ՁՈՒՏԻՒՂ
Իբրեւ՝ ՁԷԹ ԵՒ ՁՈՎ և ՈՍԿՐՅԻ
Պատրաստեալ ձեռամբ ԱԴՈԴԻ և ՊՕՈՒՆԻ, ի Նիւ-Եորք

Կարիք չունի ախորժակամ է

Մորիւ ձկան հնամիւղի բոլոր յատկութիւններն զատ, իրեւ՝ ֆոսֆորիդներու յատկութիւնն ալ ունի

Կը բուժէ թոքախտը
Կը բուժէ անարիւնութիւնը
Կը բուժէ խոյլերը
Կը բուժէ հազը, ցրտառութիւնները
Կը բուժէ ընդհանուր տկարութիւնը
Կը բուժէ մանկանց ճուազածութիւնը

Բժիշկներէն ընդունուած է, ախորժ համ ունի, գիւրամարսելի, և ամենէն փափուկ ստամոքսները կը տանին զայն,

Որ վաճառուի գլխաւոր դեղավաճառաց և դեղագործաց քով։ Գործակատարք են Համիէր և Հիրտէլ, Պոլիս։ 176

ՇԻՐՔԷԹԻ ԽԱՅՐՈՒՅԷԻ

ՇՈԳԵՆԱՒՈՒՑ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԵԱՆ ՑՈՒՑԱԿ
1889 Յունվ. 1 Կիրակի օրէն սկսեալ մինչև յետոյ տեսակ.

Բաց է Կիրակի օրերէն Եւրոպական Եկեղեցւոյ Լատինական Ծ. Ս. Ս. Ծ.

2 30 Կենիմ. Մեզպ. Պեզիւք. Թարպ. Կենիք Մերկ. Ր. Հիսար (Ր. Հիսարի շրգենաւին հետ պիտի հաղորդացի) 18
3 30 Կենիմ. Մեզպ. Պեզ. Թարպ. Կենիք. Սթէն. Մերկ. Պրամ Ր. Հիսար Պեպէք (Աքնով շրգ հետ պիտի հաղորդացի) 34
4 45 Կենիմ. Մեզպ. Պեզիւք. Թարպ. Կենիք. Սթէն. Մերկ. Պրամ. Ր. Հիսար Պեպէք Աքնվ. Գուրբ. Օրթ. Պեշիք 28
6 15 Կենիմ. Մեզպ. Պեզ. Թարպ. Կենիք. Սթէն. Մերկ. Պրամ. Ր. Հիսար Պեպէք Աքնվ. Գուրբ. Օրթ. Պեշիք 1
7 — Կենիմ. Մեզարպ. Պեզիւք. Թարպ. Պեշդզ Բաշպ. Կենիք. Մերկ. Գանրբ. Ր. և Ա. Հիսար Գանտրի Աքնվ. Զենկ. Պեյլեր Օրթաք. Գուզ. Պեշիք. Իսկ. 25
8 15 Ա. և Ր. Գալաթ Կենիմ Մեզ. Պեզ. Թարպ. Կենիք. Մերկ. Ր. Հիսար Պեպէք Աքնվ. Գուրբ. Օրթ. Պեշիք. 19
10 — Մեզպրպ. Պեզ. Թարպ. Կենիք. Մերկ. Ր. Հիսար Աքնվ. Գուրբ. Օրթաք. Պեշ. 21

Աքնամարդիէ-ի յամարլ ՀՅԼ Ս. շրգենաւ

2 — Կենիք. Սթէն. Պրամ. Ր. Հիսար Պեպէք Աքնվ. Գուրբուշ. Օրթ. Պեշիք. 20
2 — Պեպէք Աքնվ. Գուրբուշ. Օրթ. Պեշիք. 1
3 — Պեպէք Աքնվ. Գուրբուշ. Օրթ. Պեշիք. 25
3 20 Ր. Հիսար Պեպէք Աքնվ. Գուրբ. Օրթ. Պեշիք. Գալպամաշ 33
4 — Աքնվ. Գուրբ. Օրթ. Պեշիք. 23
4 35 Պեպէք Աքնվ. Գուրբուշ. Օրթաք. Պեշիք. Գալպ. 21
10 50 Հիսարէն ուղղակի կամարլ 1
11 20 Պեպէքէն ուղղակի կամարլ 25

Ուրբաթ եկեղեցի կամարլ ՀՅԼ Ս. շրգենաւ

2 — Վանիք. Զենկ. Պեյլ. Գուզ. Գալպ. 28
2 15 Պեյզզ Բաշպ. Զուզպ. Գանլ. Ա. Հիսար Գանտ. (Գանտ. պիտի հաղորդ.) 23
2 45 Ր. Ա. Գալաթ Մեզարպ. Պեշիք. Թարպ. Պեյզ. Բաշպ. Զուզպուզ. Գանլրճ. Ա. Հիսար Գանտրի. Վանիք. Զենկ. Պեյլ. Գուզկ. (Ուրբաթի օրերը ժ. 3 15 իսկ կիրարար) 19
2 50 Գանտ. Վանիք. Զենկ. Պեյլ. Գուզկ. Պեշիքթաշ 21
3 35 Զենկ. Պեյլ. Գուզկ Իսկ. 1
4 50 Գանտ. Վան. Զենկ. Պեյլ. Գուզկ. Իսկ. (Բացի ուրբաթէ) 18
5 — Պեյզ. Բաշպ. Զուզպ. Գանլ. Ա. Հիսար Գանտ. Վանիք. Զենկ. Պեյլ. Գուզ. Պեշիք. 20
7 — Սիրկ. Ր. Ա. Հիսար Գանտ. Աքնվ. Զենկ. Պեյլ. Օրթ. Գուզկ. Պեշիք. Իսկ. 33
9 — Պեշիւք. Թարպ. Պեյզզ Բաշպ. Գանլրճա Ա. Հիսար Գանտրի. Վանիք. Զենկիկ. Պեյլերպէյ Գուզկ. Իսկ. (Ուրբաթի օրերը Պուսուգլու.) 23
10 20 Գանտիլի Զենկիբեկզ 28
11 — Գուզկուշնուզէն ուղղակի կամարլ (Բացի ուրբաթէ) 20

(Բաց է Կիրակի օրերէն) Կամարքին Եւրոպական Եկեղեցի Երմենեկիլ շրգենաւոց ժամերը

3 — Պեշիք. Օրթ. Աքնվ. Պեպէք Ր. Հիսար Մերկ. Սենիք. Թարպ. Պեյզ. Մեզպ. Սենիմհայլէ 28
3 45 Գալաթ. Իսկ. Պեշիք. Գուզպ. Օրթ. Պեյլեր. Զենկեկ. Աքնվ. Գանտի. Ա. և Ր. Հիսար Գանտրի. Մերկ. Սենիք Բաշպ. Պեյզ. Թարպ. Պեզ. Սենիմհայլէ 25
4 30 Պեշիք. Օրթ. Գուբ. Սքնվ. Պեպէք Ր. Հիսար Պրամ. Սենիք. Թարպ. Պեյզ. Սենիմ. 1
5 15 Իսկ. Պեշիք. Գուզկ. Օրթաք. Պեյլ. Զենկ. Աքնվ. Գանտ. Ա. և Ր. Հիսար Գանտ. Մերկ. 33
6 — Գալաթ. Պեշիք. Օրթաք. Գուբուշ. Աքնվ. Պեպէք. Ր. Հիսար Մերկ. Սթէն. Սենիք. Պեյզ. Թարպ. Պեզ. Սենիմհայլէ 19
7 — Պեշիք. Իսկ. Գուզկ. Օրթ. Պեյլեր. Զենկ. Աքնվ. Գանտի. Ա. և Ր. Հիսար Մերկիսեն Սենիք. Թարպ. Պեշիք. 23
8 30 Պեշիք. Օրթ. Աքնվ. Պեպ. Ր. Հիսար Մերկ. Սենիք. Թարպ. Մեզար. Պեզ. 21
10 30 Ր. Հիսար Պրամ. Մերկ. Սթէն. Սենիք. Թարպ. Պեշիւքտերէ. Մեզար. Սենիմ. 18
11 10 Սենիք. Թարպ. Պեզ. Մեզպ. Սենիմ. 19
11 35 Պեպէք Ր. Հիսար Պրամ. Մերկ. Սթէն. Սենիք. 20

Կամարքին Արնավուտքեղ Եկեղեցիներ շրգենաւոց ժամերը

3 30 Ուղղակի Արնավուտքիզ 23
4 — Ուղղակի Պեպէք 21
9 55 Պեշիք. Օրթ. Գուբուշ. Աքնվ. Պեզ. Ր. Հիսար (Ա. ուղղակի Երեկ շրգենաւին հետ պիտի հաղորդակցի) 1
10 35 Պեշիք. Օրթ. Գուբ. Աքնվ. Պեպէք 25
11 20 Գալ. Պեշիք. Օրթ. Գուբ. Աքնվ. Պեպէք Ր. Հիսար Պրամ. 28
11 40 Պեշիք. Օրթ. Գուբուշ. Աքնվ. Պեպէք 1
12 — Պեշիք. Օրթ. Գուբ. Աքնվ. 25

Կամարքին Ամենայն Եկեղ. Եկեղեցիներ շրգենաւոց ժամերը

3 — Ուղղակի Զենկիլգիւզ 1
3 30 Իսկ. Գուզկ. Պեյլ. Զենկ. Վանիք Գանտ. Ա. Հիսար Գանտ. Զուզուզ. Բ. պանճեկ Պեյզ. 20
4 15 Ուղղակի Գանտիլի (Բացի ուրբաթէ) 18
9 25 Պեշիքթաշ, Գուզկուռնեմ. Պեյլեր. Զենկեկ. Վանիք. Գանտի. (Գալաթայեր գացող շրգենաւին հետ պիտի հաղորդակցի) 28
10 5 Գանտիլի Ա. Հիսար Գանտ. Զուզ. Բաշպ. Պեյզ. Թարպ. Մեզարպ. Գալաթայեր 34
10 40 Իսկ. Գուզ. (Բացի ուրբաթէ) 20
10 50 Պեշիք. Գուզկ. Պեյլեր. Զենկեկ. Վան. Գանտ. Պեշիք (Ուրբաթի օրերը Իսկ. Գանտ. շրգ. հետ պիտի հաղորդակցի) 33
11 20 Գանտի. Ա. Հիսար Գանտրճ. Զուզ. Բաշպ. Պեյզզ 28
11 45 Գալաթ. Գուզ. Պեյլ. Զենկ. Վանիք. 21

Ծան. —Օրը միջապատ եղած ատեն, շրգենաւը իրենց գտնուած տեղը պիտի Ճան։ 181